2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՁԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ 6
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.2 6
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.3 8
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.4 11
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.6 14
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.8 16
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.9 18
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.10 20
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.11 22
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.12 26
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.13 28
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.16. 30
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.17 32
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.21 34
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.22 37
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.23 39
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.24 41
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.25 43
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.26 47

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ 48
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.1 48
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.2 50
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.3 54
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.4 55
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.5 58
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.7 60
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2 .8 62
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.9 64
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2 .10 66
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2 .11 67
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.12 69
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.13 70
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.14 71
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.15 73
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.16 74
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.17 75
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.18 77
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.19 78

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.20 79
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2 .21 81
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ 81
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.1 82
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.2 85
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.3 86
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.4 88
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.5 89
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.6 90
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.7 92
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.8 94
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.9 96
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.10 97
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.11 99
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.12 101
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.13 103
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.14 105
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.15 107

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 4. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ 109
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.1 109
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.2 111
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.3 113
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.4. 115
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.5 118
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.6 122
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.7 123
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.8 125
Կատարողականի թիրախներ 125
2025 125
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.9 127
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.10 129
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.11 131
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.12 133
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.13 134
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.14 142
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.15 144
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ 148

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.1 149
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.3 150
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.4 151

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.2 Բարելավել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների ընթացակարգերը, սահմանել դրանց առանձնահատկությունները և հստակեցնել ԿԿՀ գործառույթները՝ որպես վարչարարություն իրականացնող մարմին		**Կատարող մարմիններ** Արդարադատության նախարարություն **Համակատարող մարմիններ** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:
Տարի	2025	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Դեռևս 2024 թվականին մշակված ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերով նախատեսվում է սահմանել Հանձնաժողովի կողմից հարուցվող վարույթների	Առկա չեն:

	առանձնահատկությունները: Զուգահեռ մեկնարկել է «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքները: Նպատակահարմար է սույն գործողության հետագա իրականացումը դիտարկել Հակակակոռուպցիոն ռազմավարության 1.8-րդ գործողության շրջանակներում, կրկնակի աշխատանքի իրականացումից խուսափելու և առկա խնդիրներին համակարգային լուծումներ տրամադրելու նպատակով:	
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.3
Կատարելագործել բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտը</td><td>Կատարող մարմիններ՝
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)

Համակատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">1.Մշակվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների պատշաճ իրացման համար ուղեցույցներ և մեթոդական ձեռնարկներ:
2.Բարեվարքության հարցերով կազմակերպիչների մասնագիտական գիտելիքների զարգացման համար կազմակերպվել են վերապատրաստումներ՝ հաստատված ծրագրերի:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>Գործողության կատարողականի թիրախի առաջին մասով նախատեսված բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների իրացման համար անհրաժեշտ ուղեցույցների մշակումը Հանձնաժողովի կողմից հնարավոր կլինի ապահովել օրենսդրությամբ վերջիններիս գործառույթների և</td><td>Առկա չեն:</td></tr>
</table>

	կարգավիճակի հստակեցումից հետո, ինչը թույլ կտա նաև ապահովել դրանց առավել թիրախային մշակումը: 2024 թվականի 2-րդ կիսամյակում Արդարադատության նախարարության կողմից շրջանառվել են «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը, որոնք նույն ժամանակահատվածում քննարկվել են նաև շահագրգիռ մարմինների, այդ թվում՝ Հանձնաժողովի հետ: Նախագծերի ընդունումից հետո հնարավոր կլինի մշակել բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար ուղեցույցները: Հարկ է նշել, որ բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների պատշաճ իրացման համար 2025 թվականին Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) և Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) հետ համագործակցության շրջանակներում մշակվել և Գրասենյակի պաշտոնական կայքէջում հրապարակվել է «Քաղաքական չեզոքության և քաղաքական զսպվածության մասին» վերապատրաստման մոդուլ, որի նպատակն է քաղաքացիական ծառայողներին տեղեկացնելու իրենց իրավունքների և պարտականությունների մասին՝ նվազեցնելով նրանց անօրինական վարքագծի ռիսկերը: Մոդուլի մշակումից հետո 2025 թվականի փետրվարին համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների ղեկավարների և բարեվարքության	

	հարցերով կազմակերպիչների համար կազմակերպվել է «Քաղաքական չեզոքության և քաղաքական զսպվածության մասին» վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են 68 քաղաքացիական ծառայող:	
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.4
Բարելավել էթիկայի հանձնաժողովների գործունեությունը</td><td>Կատարող մարմիններ՝
Արդարադատության նախարարություն
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին՝
Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ
(համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Էթիկայի հանձնաժողովների գործառույթների պատշաճ իրականացման համար ուղեցույցներ և մեթոդական ձեռնարկներ են մշակվել:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>2024 թվականի Զեկույցի շրջանակներում, Արդարադատության նախարարությունը ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն ծրագրի» (ՀԲԾ) հետ համատեղ Հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների գործառույթների իրականացման գույքագրված խնդիրների հիման վրա մշակել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա Նախագծերը լրամշակվել են և ներկայացվել են</td><td>Առկա չեն:</td></tr>
</table>

	Վարչապետի աշխատակազմ: Ներկայում Վարչապետի աշխատակազմի կողմց ներկայացված առաջարկությունների հիման վրա իրականացվում են Նախագծերի լրամշակման աշխատանքները: Էթիկայի հարցերով հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգի և Ազգային Ժողովի անդամների վարքագծի կանոնների առնչությամբ հարկ է նշել, որ դրանք Ազգային Ժողովի իրավասության տիրույթում են: Ազգային Ժողովում համապատասխան կառուցակարգերի ներդրման նպատակով՝ 2023 թվականին Արդարադատության նախարարության և ԵԽ ներգրավմամբ Ազգային Ժողովի կողմից մշակվել են «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի վարքագծի կանոնագիրքը հաստատելու մասին» Ազգային Ժողովի որոշման և «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծերը: Ներկայում Ազգային Ժողովի կողմից տարվում են աշխատանքներ վերոգրյալ նախագծերի վերջնականացման ուղղությամբ: Կատարողականի թիրախով նախատեսված ուղեցույցերի և մեթոդական ձեռնարկների մշակման աշխատանքների իրականացումն ապահովվելու է վերոգրյալ նախագծերի ընդունումից հետո՝ փոփոխված կառուցակարգերի հաշվառմամբ: Ազգային Ժողովի պատգամավորները կազմակերպել են մի շարք աշխատաժողովներ և քննարկումներ միջազգային գործընկերների և փորձագետների հետ և մշակել են	

	փոփոխությունների և լրացումների օրենսդրական նախագծեր՝ «Ազգային Ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքում» և «Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: Մասնավորապես՝ 1. 2025 թվականի փետրվարի 18-ին ԱԺ-ում հյուրընկալվել են ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ներկայացուցիչները և քննարկվել են պատգամավորական բարեվարքության և վարքագծի կանոնագրքի վերաբերյալ մի շարք հարցեր, 2. 2025 թվականի մարտի 28-ից 30-ը Ծաղկաձորում կազմակերպվել է աշխատաժողով ՄԱԶԾ ծրագրի (UNDP MAP)-ի փորձագետների հետ և քննարկվել են բարեվարքության և վարքագծի կանոնագրքի հետ կապված հարցեր, 3. 2025 թվականի մայիսի 31-ից հունիսի 1-ը Ծաղկաձորում աշխատանքային քննարկում է կազմակերպվել ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ներկայցուցիչների հետ համատեղ՝ քննարկվել են պատգամավորական բարեվարքության և վարքագծի կանոնագրքի վերաբերյալ առկա հարցերը՝ ուսումնասիրելով այլ երկրների փորձը:	
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.6
Ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության առկա գործիքակազմը</td><td rowspan="3">Կատարող մարմին՝
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմիններ՝
Արդարադատության նախարարություն
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)
ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)
Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)
Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td colspan="2"></td><td>1. Ապահովվել է ԿԿՀ-ի և այլ պետական մարմինների, մասնավորապես Հակակոռուպցիոն կոմիտեի և ԳԴ-ի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավման վարչության, Քննչական կոմիտեի միջև համակարգերի ինտեգրացիա և փոխգործակցելիությունը: Ստեղծվել է բարեվարքության ուսումնասիրության առանձին էլեկտրոնային հարթակ, որը հնարավորություն կտա ինքնաշխատ եղանակով տվյալների ներբեռնման, արժանահավատության ստուգման, եզրակացության նախագծի կազմման, ինչպես նաև արհեստական բանականության միջոցով ներդրված պրակտիկային համապատասխան բարեվարքության գնահատականի նախագծի ձևավորում:</td></tr>
</table>

	Կատարված աշխատանքների նկարագրություն	Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ
	Բարեվարքության հարցաթերթիկների հավաքագրման մոդուլի կառուցման աշխատանքները կասեցվել են՝ հաշվի առնելով տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունները, որոնցով սահմանվել են փոփոխություններ բարեվարքության հարցաթերթիկի բովանդակության մեջ, ինչպես նաև սահմանվել է նոր՝ ընթացիկ բարեվարքության հարցաթերթիկը: Այս բոլոր փոփոխությունների ինտեգրումը նախատեսվում է մեկնարկել և ավարտել 2026 թվականին, այն պայմանով, որ ֆինանսական առաջարկը հավանության արժանանա Տեղեկատվական համակարգերի անվտանգության խորհրդի և Կառավարության կողմից: Միաժամանակ, հարկ է նշել, որ Հանձնաժողովը դեռևս 2024 թվականի Արդարադատության նախարարությանը ներկայացրել է իր առաջարկությունը՝ նշելով, որ գործողության ելակետային տվյալների և կատարողականի թիրախների, ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշների միջև առկա է բովանդակային էական հակասություն: Հանձնաժողովն առաջարկել է որպես գործողության 2025 թվականի թիրախ սահմանել հետևյալը. 1. Գործարկվել է բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության և գնահատման մեթոդաբանության հիման վրա մշակված բարեվարքության ուսումնասիրության թվային գործիքի մոդուլը: 2. Հանձնաժողովի կողմից բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման նպատակով մշակվել է	Կատարողականի թիրախի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տրված առաջարկությանը ընթացք չի տրվել:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.8 Միասնականացնել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրությունը	**Կատարող մարմիններ՝** Արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) **Համակատարող մարմիններ՝** Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)

	օրենսդրական փոփոխությունների նախագիծը և ներկայացվել է Ազգային ժողով: Որպես «Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ» Հանձնաժողովն առաջարկել է նախատեսել հետևյալը. 1. Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի հիման վրա Հանձնաժողովին տրվել է համապատասխան գործիքակազմ: 2. Ապահովված է բարեվարքության ուսումնասիրության թվային գործիքի գործարկումը:	
Լրացուցիչ նշումներ՝		

	Կատարողականի թիրախներ	Օրենքի և հարակից իրավական ակտերի նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:
Տարի	**2025**	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	«Կոռուպցիայի կանխարգելման մասին» միասնական օրենքի մշակման համատեքստում դեռևս 2024 թվականին մեկնարկել էին համապատասխան աշխատանքները: Նախագծի մշակման նպատակով ԵՄ-ԵԽ «Լավ կառավարման գործընկերություն III» շրջանակներում Եվրոպայի Խորհրդի փորձագետների կողմից 2024 թվականին մշակվել և Արդարադատության նախարարություն է ներկայացվել տեխնիկական փաստաթուղթ: Փաստաթղթով ներկայացվել են կոռուպցիայի կանխարգելման ոլորտում օրենսդրության միասնականացման վերաբերյալ համապատասխան առաջարկություններ: Միաժամանակ, Հանձնաժողովն օրենսդրական բացերի և պրակտիկայում վերհանված խնդիրների գույքագրմամբ կազմել է տեղեկանքներ (զեկույցներ), որոնք վերաբերելի փաստաթղթերի հետ ներկայացրել է Արդարադատության նախարարությանը և ԵԽ-ին՝ փոփոխությունները վերջիններիս համատեքստում նախագծելու նպատակով: Ներկայում նախագծերի մշակումը գտնվում է ընթացիկ փուլում:	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.9
Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ ներդնելուն ուղղված քայլերի իրականացում</td><td>
Կատարող մարմիններ՝
Արդարադատության նախարարություն,
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին՝
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,
Պետական կառավարման համակարգի մարմիններ</td></tr>
<tr><td></td><td>**Կատարողականի թիրախներ**</td><td rowspan="2">Նախագծերը Կառավարության կողմից հավանության են արժանացել և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը</td></tr>
<tr><td>**Տարի**</td><td></td></tr>
<tr><td></td><td>**Կատարված աշխատանքների նկարագրություն**</td><td>**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**</td></tr>
</table>

	Հանձնաժողովի կողմից մշակվել և 2024 թվականի ապրիլի 4-ին Արդարադատության նախարարություն են ներկայացվել ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր), որոնցով առաջարկվում էր հանրային իշխանության մարմիններում, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման գործիքակազմեր: Նախագծերը 2025 թվականին ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ և քննարկվել համապատասխան նախարարական կոմիտեի նիստում: Քննարկումների արդյունքում լրամշակված Նախագծերը 2025 թվականի հունիսին ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով:	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.10
Ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը</td><td>Կատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին՝
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավարությանը և Կառավարության որոշմամբ հավանության են արժանացել:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հանրային ծառայության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով նախատեսվում է ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը, ինչպես նաև հայտարարատու բոլոր պաշտոնատար անձանց համար սահմանել շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն: Նախագծի մշակումը բխում է Տնտեսական</td><td></td></tr>
</table>

	համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ փուլի շրջանակներում առկա հանձնառություններից և ուղղված է նաև վերջիններիս կիրարկման ապահովմանը:	
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.11 **Զարգացնել հայտարարագրման էլեկտրոնային համակարգը**	**Կատարող մարմին՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով **Համակատարող մարմիններ՝** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Արդարադատության նախարարություն
Կատարողականի թիրախներ **2025**	1.Ապահովվել է հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգի շարունակական կատարելագործումը, հայտարարագրերի վերլուծության գործընթացն ավտոմատացնելու միջոցով զերծ պահել մարդկային գործոնով պայմանավորված ընտրողական մոտեցումներից, ապահովել հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու բոլոր դեպքերի ինքնաշխատ եղանակով արտացոլումը, ռիսկային ցուցիչների հիման վրա կարմիր դրոշակների հայտնաբերումն ու հայտարարագրերի հնարավորինս ամբողջական ինքնաշխատ վերլուծությունը, կոռուպցիոն ռիսկերի առկայության և ապօրինի հարստացման կասկածելի գործարքների վերաբերյալ գործերի փոխանցումը ՀՀ գլխավոր դատախազությանը, 2. Ապահովվել է պետական բոլոր շտեմարանների հետ փոխգործելիությունը, ներքին և արտաքին հաշվետվողականությունը, հրապարակային տվյալների ընտրանքային որոնումը, մեքենայական ընթեռնելի տվյալների արտահանումը ինքնաշխատ եղանակով: Ինքնաշխատ եղանակով ապահովել հայտարարատու

	պաշտոն ստանձնելու դեպքում անձի տվյալների փոխանցումն ու գրանցումը հայտարարագրման էլեկտրոնային համակարգում:
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
Հայտարարագրման համակարգում իրականացվել է որոշ տարրերի ավտոմատացում, ինչի արդյունքում նվազագույնի է հասցվել հայտարարագրման գործընթացում անզգուշության հետևանքով սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացումը: Մասնավորապես՝ ինտեգրվել են Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և ՆԳՆ ճանապարհային ոստիկանության տվյալների շտեմարանները, ինչի շնորհիվ համապատասխան տվյալներն ինքնաշխատ կերպով արտացոլվում են հայտարարագրերում, ավտոմատացվել է հայտարարագրերում տվյալների փոփոխության վերաբերյալ դիմումների ներկայացման գործընթացը: Նշված դիմումները ներկայացվում են համակարգի միջոցով, իսկ դրանց ամբողջ ընթացքն ապահովվում է համակարգում համապատասխան գործողությունների և դրանցից բխող ավտոմատացված ծանուցումների կիրառությամբ: Հարկ է նշել, որ հաշվետվությունների համակարգի կատարելագործման շնորհիվ հնարավոր է գեներացնել ցանկացած բնույթի հաշվետվություններ: Համակարգում ակտիվացվել է նաև հայտարարագրերում փոփոխություններ կատարելու ֆունկցիոնալությունը, ինչի արդյունքում հնարավոր է դարձել ավելի քան 300 ուղղման դիմումներում նշված ուղղումների կատարումը: Բացի այդ, տեխնիկական բարելավումները հնարավորություն են տվել արտահանել հայտարարագրերի հրապարակային տվյալների ամբողջական փաթեթը: Հայտարարագրերի՝ ռիսկային ցուցիչների հիման վրա ավտոմատացված վերլուծության ծրագիրը դեռևս նախապատրաստական փուլում է և	Կատարողականի թիրախի վերաբերյալ Հանձնաժողովի առաջարկությանն ընթացք չի տրվել:

նախատեսվում է այն ավարտին հասցնել 2026 թվականին: Միաժամանակ, հարկ է նշել, որ Հանձնաժողովը դեռևս 2024 թվականին Արդարադատության նախարարությանն առաջարկել է գործողության 2025 թվականի կատարողականի թիրախով նախատեսված գործողություններն ամբողջությամբ տեղափոխել 2026 թվականի կատարողականի սյունակ՝ հաշվի առնելով նախատեսվող ծրագրային կատարելագործման ծավալը, ինչպես նաև ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների ժամանակատարությունը (գնումների ընթացակարգեր): Միաժամանակ կատարողականի թիրախի 2-րդ կետում նշված՝ «պետական բոլոր շտեմարանների» բառերն առաջարկվել է փոխարինել «պետական վերաբերելի շտեմարանների» բառերով: Առաջարկվել է նաև 2026 թվականի կատարողականի թիրախի առաջին կետից հեռացնել «…Պետական մարմինների շտեմարաններում առկա տվյալները համապատասխանեցնել հայտարարագրման ենթակա տվյալներին: Հայտարարագրման ենթակա, սակայն շտեմարաններում բացակայող տվյալներն ինտեգրել շտեմարաններում» մասը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նմանատիպ խնդիր հայտարարագրման համակարգի կառուցման աշխատանքներում չի արձանագրվել, իսկ արձանագրման դեպքում էլ նմանատիպ կատարողականի կատարող մարմին չի կարող հանդիսանալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ հաշվի առնելով Հանձնաժողովի գործառույթների և լիազորությունների շրջանակը: Հարկ է նշել, որ Կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1584-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տրամադրման կարգի 7.1-ին կետի համաձայն՝ Օրենքով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունների ստացման դիմումը և դրա հիման վրա Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվող տեղեկությունները փոխանակվում են էլեկտրոնային	

եղանակով՝ ՎԵԲ ծառայության միջոցով, որի նկարագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահը: Նշյալի կատարումն ապահովելու նպատակով 2020 թվականի հունիսի 8-ին ընդունվել է ՊԵԿ նախագահի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով տեղեկությունների փոխանակման վեբ ծառայության նկարագիրը սահմանելու մասին» 513-Ա հրամանը (այսուհետ՝ Հրաման), որի շրջանակներում իրականացվել և 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ևս իրականացվում է համապատասխան տվյալների փոխանակումը: Ներկայում ՊԵԿ-ի կողմից նախատեսվում է Հրամանում կատարել փոփոխություններ, մասնավորապես՝ տրամադրվող տվյալների ցանկին ավելացնել նաև հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց վերադարձվող եկամտային հարկի գումարների մասին տեղեկատվությունը, ինչի շուրջ ներկայումս ընթանում են աշխատանքներ:	
Լրացուցիչ նշումներ՝	

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.12
Ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը</td><td>Կատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին՝
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ
(համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով կընդլայնվի բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը՝ ըստ ԳՐԵԿՈ 5-րդ փուլի գնահատման շրջանակում նախատեսված PTEF-ների շրջանակի:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>Հիմք ընդունելով՝ Եվրոպայի Խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 5-րդ փուլի գնահատման շրջանակներում առկա հանձնառությունները՝ Արդարադատության նախարարության կողմից մշակվել է ««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքնի,</td><td>Առկա չեն:</td></tr>
</table>

	««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», ««Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որով նախատեսվում է լիազորությունների լայն շրջանակ ունեցող և ինքնուրույն որոշումների կայացման իրավասություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար ներդնել բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգեր: Նախագծերի փաթեթը ներկայացվել է շահագրգիռ մարմիններին կարծիքի և ստացված կարծիքների հիման վրա լրամշակվում է: Առաջիկայում լրամշակված նախագծերի փաթեթը կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:	
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.13
Տարանջատել բարեվարքության ուսումնասիրությունը հանրային պաշտոնում նշանակման կամ առաջխաղացման համար և ընթացիկ բարեվարքության ուսումնասիրությունը (շրջանակը, մեխանիզմները)</td><td>Կատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին՝
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">1. Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>Ազգային Ժողովի կողմից դեռևս 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որով ներդրվել է բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության կառուցակարգեր դատավորների, դատախազների և քննիչների համար: Իրականացված օրենսդրական փոփոխությունների</td><td>Առկա չեն:</td></tr>
</table>

	արդյունքում 2024 թվականի ընթացքում որոշ դատախազներ և քննիչներ արդեն անցել են բարեվարքության ընթացիկ ստուգում: Նշյալ գործընթացը ներկայում գտնվում է ընթացիկ փուլում: 2025 թվականին օրենքով սահմանված կարգով շարունակվելու են իրականացվել դատավորների, դատախազների և քննիչների բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության աշխատանքները:	
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.16 **Ամրապնդել բարեվարքության ուսումնասիրության համակարգի արդյունավետությունը**	**Կատարող մարմին՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով **Համակատարող մարմիններ՝** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Արդարադատության նախարարություն
Կատարողականի թիրախներ **2025**	**1**. Ստեղծվել է բարեվարքության ուսումնասիրության առանձին էլեկտրոնային հարթակ, որը հնարավորություն կտա ինքնաշխատ եղանակով տվյալների ներբեռնման, արժանահավատության ստուգման, եզրակացության նախագծի կազմման, ինչպես նաև արհեստական բանականության միջոցով ներդրված պրակտիկային համապատասխան բարեվարքության գնահատականի նախագծի ձևավորում: 2. Երաշխավորվել ԿԿՀ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ թվայնացման միջոցով ֆիլտրելով այն թեկնածուներին, ում բարեվարքության հարցաթերթիկները պետք է ստուգվեն:
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
Գործողության շրջանակում 2024 թվականին Հանձնաժողովն առաջարկել է 2025 թվականի համար նախատեսված կատարողականի թիրախը տեղափոխել 2026 թվական՝ հաշվի առնելով, որ առանձին էլեկտրոնային հարթակի ստեղծումը պահանջում է մրցութային ընթացակարգի անցկացում: Միաժամանակ առաջարկվել է հանել 2025 թվականի կատարողականի թիրախի 2-րդ կետը՝ հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կողմից բարեվարքության ուսումնասիրության գործընթացը հայեցողական կերպով իրականացվել չի կարող և չկա այն որևիցե կերպով ֆիլտրելու հնարավորություն, այդ թվում արհեստական բանականության միջոցով, քանի	Առկա չեն:

որ իրավասու մարմինների կողմից ներկայացված բոլոր անձինք ենթակա են բարեվարքության ուսումնասիրության: Հետևաբար, բարեվարքության ուսումնասիրությունը բոլոր թեկնածուների (անձանց) համար պետք է իրականացվի ողջ գործիքակազմով: Հանձնաժողովի դիրքորոշմամբ՝ նպատակահարմար չէ կառուցել բարեվարքության ուսումնասիրության առանձին, ամբողջությամբ նոր թվային հարթակ՝ հաշվի առնելով, որ բարեվարքության ուսումնասիրության մոդուլը հնարավոր է ներդնել արդեն իսկ գործող հայտարարագրման թվային հարթակում:	
Լրացուցիչ նշումներ՝	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.17 Մեծացնել կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության գործիքների արդյունավետությունը		**Կատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համակատարող) Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ) Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:
Տարի	**2025**	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	2024 թվականին ընդունվել են ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին օրենքը: 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման և հրապարակման նոր կարգավորումը, որի նպատակն է ապահովել գործընթացի պարզեցում, թափանցիկություն և արդյունավետ վերահսկողություն: Ըստ նոր կարգավորման՝	Առկա չեն:

	1) կուսակցությունները պարտավոր են հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը ներկայացնել Հանձնաժողով մինչև հաջորդ տարվա փետրվարի 20-ը, 2) նվազեցվել է կուսակցությունների վարչական բեռը, մասնավորապես կուսակցությունները այլևս չեն ներկայացնի աուդիտի կազմակերպման համար նախնական տեղեկություններ, ինչպես նաև չեն հրապարակի իրենց հաշվետվությունները azdarar.am կայքում, այլ Հանձնաժողովը կապահովի դրանց հրապարակումը Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ www.cpcarmenia.am-ում՝ հատուկ ձևավորված առանձին բաժնում տեղադրելու միջոցով, 3) փոփոխվել են կուսակցությունների կողմից ստացվող նվիրատվությունների առավելագույն չափերը, ներդրվել են նպատակային ֆինանսավորման տրամադրման նոր մեխանիզմներ: Հարկ է նաև նշել, որ Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգում ամբողջությամբ ներդրվել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև կուսակցության պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի ներկայացման բաղադրիչը, ինչը հնարավորություն է տալիս ամբողջ գործընթացն իրականացնել Հանձնաժողովի էլեկտրոնային հարթակի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով: Նշյալ փոփոխությունները ստեղծում են ավելի թիրախային և հասցեական կարգավորումներ, որոնք թույլ են տալիս ավելի արդյունավետ վերահսկել կուսակցությունների ֆինանսական գործունեությունը և ապահովել քաղաքական գործընթացների թափանցիկությունը: Ներկայում ընթացիկ փուլում են օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքները:	

Լրացուցիչ նշումներ՝

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.21 Զարգացնել անհամատեղելիության պահանջների բացահայտման և վերահսկողության գործիքները		**Կատարող մարմին՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) **Համակատարող մարմիններ՝** Արդարադատության նախարարություն Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	1. Մշակվել են իրավական ակտերի նախագծերը, հաստատվել են ՀՀ կառավարության կողմից և ներկայացել ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: 2. Էլեկտրոնային ռեեստրների փոխգործելիության արդյունքում, բարելավվել են պետական պաշտոն զբաղեցնող անձանց որևէ մասնավոր կազմակերպության հնարավոր/
Տարի	**2025**	

		իրական մասնակցության վերաբերյալ տեղեկատվության ստացումը:
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարողականի թիրախով սահմանված գործողությունները չեն իրականացվել: 2024 թվականի կատարողական թիրախներով սահմանվել է միջազգային փորձի հիման վրա անհամատեղելիության պահանջների, մասնավորապես թույլատրելի այլ աշխատանքնի իրականացման շրջանակի վերանայում, ինչի շրջանակներում Հանձնաժողովի հետ քննարկումների և համագործակցության արդյունքում ՔԾ գրասենյակի կողմից 2024 թվականին շրջանառվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ ոչ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց համար կարգավորումների մեղմման վերաբերյալ: Հանձնաժողովի հայտարարագրման էլեկտրոնային համակարգը ներկայում արդեն փոխգործելի է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության համակարգի հետ և առկա է առևտրային ընկերություններում անձանց մասնակցության վերաբերյալ տվյաների՝ համակարգ ներբեռնման հնարավորություն: Հարկ է նշել, որ Հանձնաժողովն առաջարկել է Արդարադատության նախարարությանը հստակեցնել 2025 թվականի կատարողականի թիրախը՝ 2-րդ կետում սահմանելով, որ փոխգործելիությունը պետք է ապահովվի	Առկա չեն:

	գնումների և պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգերի հետ:	
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.22

Օրենսդրությամբ հստակեցնել «այլ սահմանափակումների» պահանջները</td><td>Կատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)

Համակատարող մարմին՝
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">1. Մշակվել են իրավական ակտերի նախագծեր, որոնցով հանրային ծառայության առանձին ոլորտների համար սահմանվել են «այլ սահմանափակումների» կոնկրետ ոլորտային առանձնահատկություններ:
2. Օրենսդրությամբ «այլ սահմանափակումներ»-ի յուրաքանչյուր տեսակի համար նախատեսել առանձին հոդված, որով սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կոնկրետ սահմանափակման շրջանակը, կիրառման պահանջները և պայմանները, դրանք կիրառող պաշտոնատար անձանց և մարմինների շրջանակը, պահպանման նկատմամբ վերահսկողության գործիքները և կառուցակարգերը:
3. Օրենսդրորեն նախատեսել հետաշխատանքային սահմանափակումների խախտմամբ կնքված աշխատանքային կամ այլ պայմանագրերի անվավեր ճանաչելուն ուղղված մեխանիզմներ:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
</table>

	Կատարված աշխատանքների նկարագրություն	Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ
	2025 թվականի հուլիսի 25-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում Արդարադատության նախարարության, Իրավաբանների հայկական ասոցիացիայի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել հանրային ծառայողների կողմից այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների վերացման ու վերանայման, դրանց նպատակահարմարության, ինչպես նաև դրանցից բխող կառուցակարգերի առանձնահատկությունների վերաբերյալ մի շարք հարցերին: Արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն վերոնշյալ փոփոխություններն ընդգրկող օրենսդրական նախագծի նախնական տարբերակը վերամշակելու և հետագա քննարկումները շարունակելու առնչությամբ՝ լավագույն լուծումներին հասնելու համար:[1]	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝		

[1] https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid08u5yg2J8d9QQycYwSpScELRG4wSmWWuFAzsvxvZVTDJitm8FUVpgc7yD16aPMcdql&id=100069433560017

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.23

Ներդնել լոբբիստական գործունեության (ոչ իրավաչափ ազդեցության) վերաբերյալ կարգավորումներ</td><td>Կատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին՝
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Տարբեր իրավական ակտերում ներառվել են լոբբիստական գործունեության վերաբերյալ կարգավորումներ, որոնցով կսահմանվեն օրենսդրական գործընթացի վրա ազդեցություն փնտրող լոբբիստների և այլ երրորդ կողմերի հետ շփումների կանոնները՝ ապահովելով վերջիններիս թափանցիկությունը:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>2024 թվականի Զեկույցի շրջանակներում 2024 թվականի ընթացքում լոբբիստական գործունեության թափանցիկությանն ուղղված կարգավորումները ներդնելու նպատակով Արդարադատության նախարարությունը համագործակցել է Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) հետ: Միջազգային վերաբերելի փորձի ուսումնասիրության և դրանից բխող իրավական ակտերի նախագծերի մշակման</td><td>Առկա չեն:</td></tr>
</table>

	նպատակով ներգրավվել են միջազգային և ներպետական փորձագետներ: Իրականացված աշխատանքների արդյունքում մշակվել են իրավական ակտերի նախագծեր, որոնք 2025 թվականի հուլիսին շրջանառվել է շահագրգիռ պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին՝ կարծիքների ստացման նպատակով: Միաժամանակ, 2025 թվականի հուլիսին նախատեսվում է նախագծային առաջարկվող լուծումների շուրջ իրականացնել համապատասխան հանրային քննարկում, որի արդյունքներով նախագիծը կլրամշակվի:	
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.24

Սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը ոչ ծառայողական նպատակներով օգտագործման սահմանափակման անձնական նպատակներով օգտագործելը սահմանափակող դրույթներ</td><td>Կատարող մարմիններ՝
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
(համաձայնությամբ)
Արդարադատության նախարարություն
Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ
(համաձայնությամբ)

Համակատարող մարմիններ
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
(համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">1. Մշակվել են իրավական ակտերի նախագծեր, որոնցով հանրային ծառայության առանձին ոլորտների համար սահմանվել են «այլ սահմանափակումների» կոնկրետ ոլորտային առանձնահատկություններ:
2. Օրենսդրությամբ «այլ սահմանափակումներ»-ի յուրաքանչյուր տեսակի համար նախատեսել առանձին հոդված, որով սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կոնկրետ սահմանափակման շրջանակը, կիրառման պահանջները և պայմանները, դրանք կիրառող պաշտոնատար անձանց և մարմինների շրջանակը, պահպանման նկատմամբ վերահսկողության գործիքները և կառուցակարգերը:
3. Օրենսդրորեն նախատեսել հետաշխատանքային սահմանափակումների խախտմամբ կնքված աշխատանքային կամ այլ պայմանագրերի անվավեր ճանաչելուն ուղղված մեխանիզմներ:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
</table>

	Կատարված աշխատանքների նկարագրություն	Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ
	2023 և 2024 թվականներին բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ տարեկան զեկույցների շրջանակներում Հանձնաժողովը ներկայացրել է այլ սահմանափակումների ինստիտուտի խնդիրները, վերաբերելի միջազգային փորձը և իրավակարգավորումների վերանայման առաջարկությունները: Միաժամանակ, հաշվի առնելով «Կոռուպցիայի կանխարգելման օրենքի» մշակմանն առնչվող գործողությունը, որի կատարման ժամկետը ևս 2025 թվականն է, Հանձնաժողովն առաջարկել է այլ սահմանափակումների վերանայումն իրականացնել նշված օրենքի մշակման շրջանակներում:	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.25 Ներդնել բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների կիրառման միասնական համակարգ		**Կատարող մարմիններ՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ) **Համակատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն
	Կատարողականի թիրախներ	Նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավարությանը և Կառավարության որոշմամբ հավանության են արժանացել:
Տարի	**2025**	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Դեռևս 2024 թվականին Արդարադատության նախարարություն ներկայացված դիրքորոշմամբ՝ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը նշել է, որ բարեվարքության համակարգի տարրերի խախտման դեմ ուղղված պատժամիջոցները միասնական չեն կարող լինել, մասնավորապես՝ հանրային ծառայության պաշտոն և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար (բոլոր սուբյեկտների) բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվություն սահմանող միասնական պատասխանատվության սանկցիաներ նախատեսելը խնդրահարույց է և չի բխում առաջին հերթին համաչափության սահմանադրական սկզբունքի պահանջից: Ասվածն ամրապնդվում է նաև այն	2024 թվականին նախատեսվել է գույքագրել բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության գործող կառուցակարգերի առկա խնդիրները, ինչն իրականացվել է ԿԿՀ կողմից և ներկայացվել ԱՆ, ինչպես նաև տեղեկանքի տեսքով հրապարակվել Հանձնաժողովի կայքէջում: Գույքագրման արդյունքում նախատեսվել է օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակում, որը 2025 թ. առաջին կիսամյակի դրությամբ դեռևս առկա չէ և ենթակա է ներկայացման ԱՆ կողմից:

	հանգամանքով, որ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կարգապահական տույժ նշանակելիս հաշվի են առնվում խախտման բնույթը, բովանդակությունը, այն հանգամանքները, որի պարագայում կատարվել է խախտումը, խախտման հետևանքները, նախկինում ծառայողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառված լինելու և (կամ) խախտումներ կատարած լինելու հանգամանքները: Հարկ է նշել, որ համաչափության սահմանադրական սկզբունքին անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանը, մասնավորապես՝ մի շարք որոշումներում Սահմանադրական դատարանը արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնց համաձայն՝ 1) համաչափության սկզբունքը բխում է Սահմանադրության 1-ին հոդվածից (իրավական պետության սկզբունք), (ՍԴՈ–917), 2) «…ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունների և պատասխանատվության տեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանման… իր լիազորությունն իրականացնելիս օրենսդիրն ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես, … օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է …պատասխանատվության, … պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը, սահմանում է … պատասխանատվության միջոցներն ու չափերը: Նշված հարցերում օրենսդրի հարցերում օրենսդրի հայեցողությունը, սակայն, ունի իր սահմանադրական շրջանակները, և օրենսդիրն իր նշված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է առանձին սահմանադրական սկզբունքներով: … Հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից	Հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի 1.25-րդ միջոցառման շրջանակներում հանրային ծառայության պաշտոն և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար (բոլոր սուբյեկտների) բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվություն սահմանող միասնական պատասխանատվության սանկցիաներ նախատեսելը խնդրահարույց է և չի բխում առաջին հերթին համաչափության սահմանադրական սկզբունքի պահանջից: Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2024 թվականի մարտի 28-ի թիվ 42/47.29/11683-2024 և 2024 թվականի ապրիլի 26-ի թիվ 42//15386-2024 գրություններով Հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի 1.25-րդ միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների և կատարման հնարավորության վերաբերյալ Արդարադատության նախարարություն է ներկայացվել համապատասխան տեղեկատվությունը:

	բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով…» (ՍԴՈ–920), 3) «…Համաչափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև»: «…Իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից և այլ էական հանգամանքներից…» (ՍԴՈ–924), 4) «…այդչափ լայն սահմանափակումը … բավարար չափով հիմնավորված չէ առարկայական չափանիշներով: Այն …սահմանադրական իրավունքի ոչ համաչափ սահմանափակում է՝ Սահմանադրության 1-ին հոդվածից (իրավական պետության սկզբունք) բխող համաչափության սկզբունքի …տեսանկյունից…» (ՍԴՈ–917), 5) «…օրենսդիրը, իրացնելով իրավունքների և ազատությունների սահմանափակումներ նախատեսելու իր իրավասությունը, պետք է այնպիսի համամասնությամբ դա կատարի, որ ընտրված սահմանափակումը համահունչ լինի ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար…» (ՍԴՈ-1293): Հարկ է նշել նաև, որ քաղաքացիական ծառայության	

	տեղեկատվական հարթակ ներբեռնված տվյալների համաձայն՝ վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները առերևույթ խախտելու դեպքով նշանակվել և էթիկայի հանձնաժողովով անցկացվել է 7 (յոթ), անհամատեղելիության պահանջի խախտման դեպքով՝ 1 (մեկ), այլ սահմանափակումները առերևույթ խախտելու դեպքով 2 (երկու) և նվերներ ընդունելու արգելքի խախտման դեպքով 1 (մեկ) ծառայողական քննություն: Այսպես, իրավակիրառ պրակտիկայում բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով նշանակված մի քանի ծառայողական քննությունները նույնպես հնարավորություն չեն տալիս վեր հանել կամ գնահատել պատասխանատվության գործող կառուցակարգերում առկա խնդիրները:	
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.26

Որոշակի պաշտոններ զբաղեցնող անձանց համար սահմանել պատասխանատվության միջոցների կիրառման պարտադիր պահանջ</td><td>Կատարող մարմիններ

Արդարադատության նախարարություն
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմիններ

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)
Ազգային անվտանգության ծառայություն</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Մշակվել են իրավական ակտի նախագծեր, որոնցով սահմանվել է՝
1.Քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց մասով ԱԺ պատգամավորների, կառավարության անդամների, համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համար համապատասխան ոլորտային օրենքներով սահմանել բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցներ կիրառելու պարտադիր պահանջ.
2.Վարչական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց համար պատասխանատ վության միջոցների կիրառման պարտադիր պահանջ.
3.Հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներով (համայնքային, դիվանագիտական, ոստիկանական, զինվորական, ազգային անվտանգության մարմիններում ծառայությունների մասին), ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված՝ սահմանվել</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
</table>

		է պատասխանատվության միջոցների կիրառման պարտադիր պահանջ:
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	2025 թվականի առաջին կիսամյակում կատարողականի թիրախով սահմանված գործողությունները չեն իրականացվել:	Ըստ գործողության ելակետային տվյալի՝ գործողությունը միտված է քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համար պատասխանատվության կառուցակարգերի ներդրմանը՝ հաշվի առնելով, որ կարգապահական պատասխանատվությունը վերջիններիս նկատմամբ գործող օրենսդրությամբ կիրառելի չէ: Արդարադատության նախարարության կողմից դեռևս նախագիծ չի շրջանառվել:
Լրացուցիչ նշումներ՝		

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.1 Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման կարգը		**Կատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն **Համակատարող մարմին** Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Մշակվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում,

Տարի	2025	«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում և այլ հարակից իրավական ակտերում փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնցով կամրապնդվեն Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության երաշխիքները՝ վերջինիս ձևավորման կարգի վերանայման, այն է՝ Կոմիտեին նախագահի և վերջինիս տեղակալների նշանակման կարգի փոփոխությամբ:
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	2024 թվականին Արդարադատության նախարարության կողմից իրականացվել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և վերջինիս տեղակալների նշանակման ընթացակարգերի միջազգային փորձի ուսումնասիրություն: Միաժամանակ, Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նախագծով նախատեսվում է հստակեցնել Օրենքով նախատեսված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրությանը, դրա համար ձևավորվող Խորհրդին և թեկնածուներին վերաբերող օրենսդրական կարգավորումները՝ շտկելով գործնականում առկա խնդիրները:	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.2 **Երաշխավորել Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ հզորացումը**		**Կատարող մարմին՝** Հակակոռուպցիոն կոմիտե
	Կատարողականի թիրախներ	Կազմակերպվել և անցկացվել են Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների համալրման մրցույթները
Տարի	2025	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Հակակոռուպցիոն կոմիտեն ձևավորվել է 2021 թվականի հոկտեմբերի 23–ին: Ստեղծման օրվանից մինչ 2025 թվականի առաջին կիսամյակի ավարտը Հակակոռուպցիոն կոմիտեի թափուր հաստիքների համալրման նպատակով անցկացվել են բազմաթիվ մրցույթներ: 2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող 120 պաշտոններից համալրված է 80-ը, ինքնավար 80 պաշտոններից՝ 72-ը: Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող թափուր պաշտոնների համար 2025 թվականի ընթացքում հայտարարվել են հետևյալ մրցույթները՝ 2025 թվականի մարտի 25-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող բաժնի պետի՝ 1, բաժնի պետի տեղակալի՝ 1, ավագ օպերլիազորի՝ 1 և օպերլիազորի՝ 36	Առկա չեն:

	պաշտոնների համալրման համար մրցույթ պաշտոնների (հղում՝ https://www.anticorruption.am/hy/job/haytararutyun-hakakoruptsion-komitei-operativ-hetakhuzakan-gortsaruytner-irakanatsnogh-pashtonneri-hamalrman-npatakov-antskatsvogh-mrtsuyti): Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված 10 թեկնածուներից 5-ը նշանակվել են համապատասխան պաշտոնների: 2025 թվականի մարտի 26-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ պահանջող՝ ավագ օպերլիազոր-տնտեսագետի՝ 1, օպերլիազոր-տնտեսագետի՝ 1, ավագ օպերլիազոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի՝ 1 և օպերլիազոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի՝ 1 պաշտոնների համալրման համար մրցույթ (հղում՝ https://www.anticorruption.am/hy/job/haytararutyun-hakakoruptsion-komitei-operativ-hetakhuzakan-gortsuneutyun-irakanatsnogh-storabazhanman-pashtoni-andznagrov-sahmanvats-teghekatvakan-tekhnologianeri-kam-tntesagitutyan-kam-pashtoni-andznagrov-sahmanvats-gortsaruytnerov-paymana-3): Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչվածներ չեն եղել: 2025 թվականի մայիսի 6-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ավագ օպերլիազորի՝ 2	

	պաշտոնների համալրման համար մրցույթ, որն ընթացքի (բարեվարքության ուսումնասիրության փուլում) մեջ է (հղում՝ https://www.anticorruption.am/hy/job/haytararutyun-hakakoruptsion-komitei-operativ-hetakhuzakan-gortsaruytner-irakanatsnogh-pashtonneri-hamalrman-npatakov-antskatsvogh-mrtsuyti-3): Ինքնավար թափուր պաշտոնների համար 2025 թվականի ընթացքում հայտարարվել են հետևյալ մրցույթները՝ 2025 թվականի մարտի 25-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների՝ քննչական վարչության պետի տեղակալի՝ 1, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 3, հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 1, ավագ քննիչի՝ 3 պաշտոնների համալրման համար մրցույթ, որն ընթացքի (բարեվարքության ուսումնասիրության փուլում) մեջ է (հղում՝ https://www.anticorruption.am/hy/job/haytararutyun-hakakoruptsion-komitei-inknavar-pashtonneri-hamalrman-npatakov-antskatsvogh-mrtsuyti): 2025 թվականի մայիսի 6-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների՝ հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 1 պաշտոնի համալրման համար մրցույթ (հղում՝ https://www.anticorruption.am/hy/job/haytararutyun-hakakoruptsion-komitei-inknavar-pashtonneri-hamalrman-npatakov-antskatsvogh-mrtsuyti-3): Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչվածներ չեն եղել: 2025 թվականի մայիսի 26-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար /նախագահի	

	տեղակալի/ պաշտոնի համալրման նպատակով անցկացվող մրցույթի մասին (հղում՝ https://www.anticorruption.am/hy/job/teghekatvutyun-hakakoruptsion-komitei-inknavar-nakhagahi-teghakali-pashtoni-hamalrman-npatakov-antskatsvogh-mrtsuyti-masin): Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված 1 թեկնածուն նշանակվել է համապատասխան պաշտոնի: 2025 թվականի հունիսի 2-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների՝ վարչության պետի՝ 1, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 1 պաշտոնների համալրման համար մրցույթ, որն ընթացքի (թեստավորման փուլում) մեջ է (հղում՝ https://www.anticorruption.am/hy/job/haytararutyun-hakakoruptsion-komitei-inknavar-pashtonneri-hamalrman-npatakov-antskatsvogh-mrtsuyti-4):	
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.3
Իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության գործունեության թվայնաց-մանն ուղղված միջոցներ</td><td>Կատարող մարմիններ՝
Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)
Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Համակատարող մարմիններ՝
Արդարադատության նախարարություն
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Գնահատված են Հակակոռուպցիոն կոմիտեի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության թվայնացման կարիքները:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>2025 թվականի հունիսի 25-ին Գլխավոր դատախազությունը նախաձեռնել է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ՝ նախորդիվ «Քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային համակարգի արդիականացման վերաբերյալ տեխնիկական առաջադրանքի» վերաբերյալ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ներկայացված դիրքորոշման հաշվառմամբ:</td><td>Առկա չեն:</td></tr>
<tr><td colspan="3">Լրացուցիչ նշումներ՝</td></tr>
</table>

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.4
Անցկացնել կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով մասնագիտական վերապատրաստումներ և պատրաստումներ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում
Մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների համար</td><td rowspan="2">Կատարող մարմիններ՝
Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)
Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)
Արդարադատության ակադեմիա

Համակատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td><td rowspan="2">Իրականացվել է կոռուպցիայի դեմ պայքարին՝ այդ թվում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առնչությամբ թեմաներով վերապատրաստումներ և պատրաստումներ հաստատված բոլոր խմբերից առնվազն 60%-ի հետ:</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն

2025 թվականի համար Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 15–ի թիվ 35-Լ հրամանով հաստատվել է «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստման ուսուցման ծրագիրը», որում ներառվել են կոռուպցիայի դեմ պայքարի՝ այդ թվում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության վերաբերյալ թեմաներ: Բացի այդ, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 17–րդ հոդվածի 13–րդ մասի համաձայն՝ ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով սահմանված կարգով մասնագիտական պատրաստում են անցնում Արդարադատության ակադեմիայում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Մասնագիտական</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ

Առկա չեն:</td></tr>
</table>

	պատրաստման թեմաներում ևս ներառված են կոռուպցիայի դեմ պայքարի՝ այդ թվում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության վերաբերյալ թեմաներ: Այսպես, 2025 թվականին սահմանված կարգով պարտադիր վերապատրաստում են անցել 23 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք՝ Արդարադատության ակադեմիայում, իսկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման 18 ծառայողներ՝ ՆԳՆ կրթահամալիրում: 2025 թվականի հունվարի 21-ից 24-ն ընկած ժամանակահատվածում ԵԱՀԿ ֆինանսավորմամբ կազմակերպվել է «Վիրտուալ ակտիվների վերաբերյալ քննություն, բլոքչեյն» թեմայով վերապատրաստում, որին մասնակցել է Հակակոռուպցիոն կոմիտեի 2 ծառայող: 2025 թվականի հունվարի 23-ից 24-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ Պետքարտուղարության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի (INL) ֆինանսավորմամբ «East-West Management» կազմակերպությունը կազմակերպել է «Ապօրինի հարստացում» թեմայով վերապատրաստում, որին մասնակցել է Հակակոռուպցիոն կոմիտեի 3 ծառայող: 2025 թվականի հունիսի 13-ից 15-ն ընկած ժամանակահատվածում ԵՄ ֆինանսավորմամբ «Էքորիս» կազմակերպությունը կազմակերպել է «Փողերի լվացման հատկանիշներով հարուցված քրեական գործերի քննության առանձնահատկությունները» թեմայով վերապատրաստում, որին մասնակցել է Հակակոռուպցիոն կոմիտեի 9 ծառայող և 7 դատախազ: 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր» դասընթացով	

	վերապատրաստվել է 126 դատախազ: «Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները», «Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցեր» վերտառությամբ դասընթացները նախատեսված են Գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների համար, Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդի հիմնահարցեր», «Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների (նախնական) ապահովումը, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությունը դատարանում», «ՀՀ վերաքննիչ, վճռաբեկ և ՄԻԵԴ-ի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ», «Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունները և միջազգային համագործակցությունն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում» վերտառությամբ դասընթացները՝ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների համար և «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը» վերտառությամբ հեռավար դասընթացը՝ բոլոր դատախազների համար: Նշված դասընթացներն ընդգրկված են դատախազների տարեկան վերապատրաստման հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում, որոնցով վերապատրաստումները նախատեսված են 2025 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր	

	ամիսներին: «Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր», «Փողերի լվացման ոլորտի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացներ են նախատեսվել Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վերապատրաստման ծրագրում և «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի շրջանակում մոդուլներ են նախատեսվել կոռուպցիոն հանցանքների բացահայտման, որակման և քննության առանձնահատկությունների վերաբերյալ: 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում նշված դասընթացներով վերապատրաստվել է Հակակոռուպցիոն կոմիտեի 23 քննիչ:	
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.5 Իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի և դրանց քննչական ենթակայության վերանայում		**Կատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն **Համակատարող մարմիններ** Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ) Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Քննչական կոմիտե (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Միջազգային փորձի և չափանիշների հիման վրա վերանայվել է կոռուպցիան հանցագործությունների ցանկը, ինչպես նաև
Տարի	2025	

		քննչական ենթակայությունը:
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Դեռևս 2024 թվականի ընթացքում Արդարադատության նախարարությունը Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ հասարակական կազմակերպությունների և շահագրգիռ մարմինների ներգրավմամբ իրականացրել է աշխատանքներ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների ցանկի վերաբերյալ առկա առաջարկությունների, գործնական խնդիրների և միջազգային ստանդարտների ուղղությամբ: Վերոգրյալ աշխատանքների շրջանակներում Բարձրագույն դատական խորհրդի կողմից ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված 1-ով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկի վերաբերյալ» ուսումնասիրությունը, որի շրջանակներում որոշակիորեն անդրադարձ է կատարվել նաև առկա միջազգային փորձին և չափանիշներին, միևնույն ժամանակ ներկայացվել են առաջարկներ գործնական խնդիրների հաշվառմամբ:	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.7 **Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների աշխատանքներին ներգրավել տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների**		**Կատարող մարմիններ՝** Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ) Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) **Համակատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն
	Կատարողականի թիրախներ	Ըստ կարիքի՝ փորձագետներին իրավապահ մարմիններին աշխատանքներին ներգրավվելու աշխատանքներ են իրականացվել:
Տարի	2025	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Կոռուպցիոն հանցագործությունների դեպքում հաճախ անհրաժեշտություն է առաջանում ներգրավել համապատասխան որակավորում ունեցող մասնագետների՝ օժանդակելու, համապատասխան վերլուծություններ իրականացնելու նեղ մասնագիտական ոլորտներում՝ ուղղված նոր հանցագործությունների բացահայտմանը և կանխմանը: Նման պահանջները կապված են հիմնականում տնտեսագիտական/ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և անհրաժեշտ այլ ոլորտներում մասնագիտական հմտությունների և կարողությունների հետ: Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման նպատակով իրականացվող գործունեությունը մեծ մասամբ կապված է տեղեկատվական տիրույթում առկա, այդ թվում՝ ֆինանսական գործունեության վերաբերյալ տեղեկությունների վերլուծության հետ: Տվյալ ոլորտում լավագույն կերպով աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է կոնկրետ տվյալ մասնագիտացումն ունեցող մասնագետների ներգավում: Բացի այդ, հարկ է նշել քրեական վարույթին	Առկա չեն:

	զուգահեռ պետք է իրականացվի նաև ֆինանսական քննություն, ինչը լավագույնս կարող են իրականացնել բացառապես տվյալ ոլորտում մասնագիտացված անձինք: Ներկայում Հակակոռուպցիոն կոմիտեում ներգրավված է 4 փորձագետ, որից 2-ը փորձագետ–տնտեսագետ են: Վերոնշյալի առնչությամբ հարկ ենք համարում նշել նաև, որ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից մշակված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-361-Ն օրենքի շրջանակներում «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 16-րդ հոդվածը լրացվել է 12.1-ին մասով, որի հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախատեսվել են ավագ օպերլիազոր-տնտեսագետի, օպերլիազոր-տնտեսագետի, ավագ օպերլիազոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի, օպերլիազոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի հաստիքները: Հարկ է նկատել, որ նշված հաստիքները համալրվելու դեպքում ծառայողներն, ըստ էության, իրականացնելու են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև տնտեսագիտության ոլորտներին բնորոշ գործառույթներ: Այս փոփոխությամբ պայմանավորված Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքացուցակում, ինչպես նաև ներքին իրավական ակտերում ևս կատարվել են համապատասխան լրացումներ: Նշված հաստիքները համալրելու համար 2025 թվականի ընթացքում հայտարարվել է մեկ մրցույթ:	
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2 .8 Անցկացնել վերապատրաստումներ հակակոռուպցիոն դատարանների դատավորների համար	**Կատարող մարմիններ՝** Արդարադատության նախարարություն Արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ) **Համակատարող մարմին՝** Ընդհանուր ժողովի Ուսումնական հանձնաժողով (համաձայնությամբ) Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)
Կատարողականի թիրախներ 2025	Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների դատավորների առնվազն 70%-ը վերապատրաստվել է:
Կատարված աշխատանքների նկարագրություն Դատավորների ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողովը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի և «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, 19.07.2024թ. թիվ N 26/24-Ու որոշմամբ Արդարադատության ակադեմիա է ներկայացրել, ի թիվս այլնի, կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորների, դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների վերապատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկությունները՝ 2025 թվականի ուսուցման ծրագրերում ներառելու նպատակով: Դատավորների և դատավորների թեկնածուների 2025 թվականի	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ** Առկա չեն:

տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում կոռուպցիոն հանցագործությունների գործեր քննող բոլոր դատավորների համար նախատեսված են հետևյալ թեմաներով դասընթացները. «Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները», «Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցեր», «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան», «Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկան և կոռուպցիայի կանխարգելման արդի հարցերը», «Տնտեսական հանցագործությունների քննության առանձնահատկությունները», իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդի հարցեր», «Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների (նախնական) ապահովումը», «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությունը դատարանում», «ՄԻԵԴ-ի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ», «Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունները և միջազգային համագործակցությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում», ինչպես նաև՝ «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպ¬ված հանցավորության դեմ պայքարի քրեադատավա¬րական գործիքա¬կազմը» վերտառությամբ հեռավար դասընթացը: Դասընթացներին նախատեսվել է Հակակոռուպցիոն դատարանի, Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի և Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի բոլոր դատավորների մասնակցությունը: Վերը նշված դասընթացներով վերապատրաստումները նախատեսված են 2025 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:	

Լրացուցիչ նշումներ՝

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.9 Մշակել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների և դատավորների կողմից քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերի առանձնահատկություններով պայմանավորված մեթոդական ուղեցույցներ	**Կատարող մարմին՝** Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ) **Համակատարող մարմիններ՝** Արդարադատության նախարարություն Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)
Կատարողականի թիրախներ 2025	Մշակվել է ուղեցույցի նախագիծ, որով սահմանվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերի առանձնահատկությունները:
Կատարված աշխատանքների նկարագրություն Գործողության շրջանակում Հակակոռուպցիոն դատարանի երեք ատյաններից ստացված թեմատիկ առաջարկների հավաքագրվել են, ամփոփվել և ներկայացվել են Ժողովրդավարության զարգացման հիմնադրամին՝ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում մեթոդական ուղեցույցի մշակման ուղղությամբ համապատասխան միջոցներ ապահովելու համար: Նշված կազմակերպության փորձագետների հետ 2025 թվականի մայիս-հունիս	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ** Առկա չեն:

ամիսներին կազմակերպված հանդիպումների ընթացքում քննարկվել են մեթոդական ուղեցույցի բովանդակությանը վերաբերող հարցեր, ինչպիսիք են՝ հակակոռուպցիոն գործերի քննության դատավարական փուլի իրացման հիմնախնդիրների վերհանման և միջազգային լավագույն փորձի ներկայացման անհրաժեշտությունը: Մեթոդական ուղեցույցի մշակման արդյունավետության ապահովման նպատակով նախատեսվել է առաջիկայում կազմակերպել հանդիպումներ մասնագիտացված դատավորների և մեթոդական ուղեցույցը մշակող մասնագետների միջև:	
Լրացուցիչ նշումներ՝	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2 .10 Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների աշխատանքներին ներգրավել տնտեսագիտական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների	**Կատարող մարմին՝** Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ) **Համակատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն
Կատարողականի թիրախներ 2025	Հակակոռուպցիոն դատարաններում տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետները ներգրավվել են:
Կատարված աշխատանքների նկարագրություն Տնտեսագիտական գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման գործողության շրջանակում՝ Հակակոռուպցիոն դատարանին տրամադրվել է թվով 2 հաստիք, իսկ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանին՝ 1 հաստիք: Նշված հաստիքները որակյալ մասնագետներով համալրելու ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր՝ հաստիքները համալրելու անհրաժեշտության մասին տեղեկացման միջոցով, սակայն համալրումը դեռևս չի իրականացվել:	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ** Նշված հաստիքները որակյալ մասնագետներով համալրելու ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր՝ հաստիքները համալրելու անհրաժեշտության մասին տեղեկացման միջոցով, սակայն համալրումը դեռևս չի իրականացվել, քանի որ համապատասխան թեկնածուները հրաժարվել են աշխատանքից տվյալ հաստիքի գործառույթների բարդության և ծավալի համեմատ ոչ համաչափ վարձատրության պատճառով:
Լրացուցիչ նշումներ՝	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2 .11 Սահմանել կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգ և կատարելագործել առկա կառուցակարգերը	**Կատարող մարմիններ՝** Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ) Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ) **Համակատարող մարմիններ՝** Արդարադատության նախարարություն Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Կատարողականի թիրախներ 2025	Կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման համար ապահովվել են օրենսդրական հիմքերը և ծրագրային/ տեխնիկական լուծումները:
Կատարված աշխատանքների նկարագրություն Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության օժանդակությամբ մշակվել և ներկայումս ավարտական փուլին է հասցվել դատախազի աշխատանքի վիճակագրական տվյալների վերաբերյալ էլեկտրոնային վիճակագրության համակարգը, որը, ի թիվս այլնի, ներառելու է յուրաքանչյուր կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Բացի այդ, արդիականացվել են Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ** Առկա չեն:

նկատմամբ հսկողության վարչության վիճակագրության վարման մեխանիզմները: Ներկայումս հաշվառվում են ոչ միայն քրեական վարույթները, դրանց ընթացքն ու արդյունքները, այլ նաև՝ վիճակագրական փաստաթղթերում ներառվում են տեղեկություններ մեղադրյալների անձնական տվյալների, զբաղեցրած պաշտոնների, քրեական հետապնդման իրավական գնահատականների, ընտրված խափանման միջոցների վերաբերյալ: Բացի այդ, վիճակագրություն է վարվում չնախաձեռնված քրեական վարույթների, դրանց դեմ ներկայացված բողոքների վերաբերյալ: Առանձին հաշվառվում են դատաքննության փուլում գտվող վարույթները, բողոքարկված դատական ակտերը:	
Լրացուցիչ նշումներ՝ Հակակոռուպցիոն աշխատանքային խմբի հանդիպումներում նշված գործողության կատարման հնարավորությունը քննարկվել է համակատարող մյուս շահառու մարմինների կողմից ծրագրային համապատասխան լուծումներ ստեղծելու հարցի համատեքստում:	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.12 Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաները ներառել դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների ուսուցման և վերապատրաստման ծրագրերում	**Կատարող մարմիններ՝** Արդարադատության ակադեմիա Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ) **Համակատարող մարմիններ՝** Արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողով (համաձայնությամբ)
Կատարողականի թիրախներ 2025	Դատավորների թեկնածուների առնվազն 60%-ը վերապատրաստվել է:
Կատարված աշխատանքների նկարագրություն Դատավորների ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողովը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի և «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, 19.07.2024թ. թիվ N 26/24-Ու որոշմամբ Արդարադատության ակադեմիա է ներկայացրել դատավորների, դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների վերապատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկությունները 2025 թվականի ուսուցման ծրագրերում ներառելու նպատակով, որոնց բաժիններից մեկը վերաբերում է	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ** Առկա չեն:

հակակոռուպցիոն մասնագիտացման հատուկ դասընթացին՝ նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորների, դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների համար: Դատավորների, դատավորների թեկնածուների և դատավորների թեկնածուների հավակնորդների 2025 թվականի ուսումնական ծրագրում նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր» վերտառությամբ դասընթացը: 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Արդարադատության ակադեմիայում վերոնշյալ թեմայով վերապատրաստվել է 250 դատավոր, 33 դատավորի թեկնածու:	
Լրացուցիչ նշումներ՝	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.13. Կատարելագործել և արդիականացնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը:	**Կատարող մարմին՝** Գլխավոր դատախազություն **Համակատարող մարմիններ՝** Արդարադատության նախարարություն Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Կատարողականի թիրախներ	Վերհանված խնդիրների հիման վրա մշակվել են

2025	օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնցով կատարելագործվել են կառավարող մարմնի, բռնագանձված գույքի կառավարման մոդելի կառուցակարգերը
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի առկա կառուցակարգերի բարելավման աշխատանքների կազմակերպման նպատակով 2025 թվականի հունիսի 14-ին տեղի ունեցած Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում քննարկվել են նաև ինստիտուտի գործարկման ընթացքում առկա խնդիրները: Խորհրդի նիստի արդյունքների հաշվառմամբ՝ ներկայում Արդարադատության նախարարությունը և Գլխավոր դատախազությունը համատեղ մեկնարկել են առկա գործնական և իրավական խնդիրների հաղթահարմանն ուղղված աշխատանքները:	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.14 Կատարելագործել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերը	**Կատարող մարմիններ՝** Գլխավոր դատախազություն Արդարադատության նախարարություն **Համակատարող մարմին՝** Պետական գույքի կառավարման կոմիտե

	Կատարողականի թիրախներ	
Տարի	2025	Օրենսդրական փոփոխությունների և հարակից իրավական ակտերի նախագծերի փաթեթը հավանության է արժանացել Կառավարության կողմից և ներկայացվել է Ազգային ժողով:

	Կատարված աշխատանքների նկարագրություն Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի շրջանակներում մասնաբաժինների (փայերի) գնահատման և պետական գույքի կառավարման գործընթացների պատշաճ կանոնակարգմանն (ինստիտուցիոնալացման) առնչվող հարցերի վերաբերյալ 24.02.2025 թվականին համապատասխան առաջարկություններ են ներկայացվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին: Մասնավորապես, ներկայացվել են գործնականում հանդիպող խնդիրները՝ կապված ընկերությունների բաժնեմասերի (բաժնետոմսերի) գնահատման հետ, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ: Բռնագանձված գույքի կառավարման գործընթացի պատշաճ կանոնակարգման ու ինստիտուցիոնալացման ուղղությամբ առաջարկվել է գործընթացն ավտոմատացնել՝ օրինական ուժի մեջ մտած բնօրինակ վճռի ստացումից հետո դրա էլեկտրոնային տարբերակն իրավասու պետական մարմիններ ուղարկելով և նրանց կողմից դրա կատարումն իրականացնելով: Գույքի հետագա կառավարման մասով առաջարկվել է քննարկել նոր, առավել մասնագիտացված մարմնի ստեղծումը կամ Պետական գույքի կառավարման կոմիտեի գործիքները կատարելագործելու հնարավորությունը:	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ** Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.15

Մշակել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ մեթոդիկա և ուղեցույցներ, անցկացնել մասնագիտական վերապատրաստումներ</td><td>Կատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին՝
Գլխավոր դատախազություն
(համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Հաստատվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ թեմաներն ու մոդուլները, վերապատրաստման ծրագիրն ու մեթոդաբանություն և ուղեցույցներ, որոնք տարածվել են համապատասխան իրավապահ մարմիններում:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների համար «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդի հիմնահարցեր», «Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների (նախնական) ապահովումը, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությունը դատարանում», «ՀՀ վերաքննիչ, վճռաբեկ և ՄԻԵԴ-ի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ», «Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունները և</td><td>Առկա չեն:</td></tr>
</table>

	միջազգային համագործակցությունն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում» վերտառությամբ դասընթացները ընդգրկված են դատախազների տարեկան վերապատրաստման հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում, որոնցով վերապատրաստումները նախատեսված են 2025 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին:	
Լրացուցիչ նշումներ՝		
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.16 Ընդլայնել և արդիականացնել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային և անդրազգային հարթությունում կոռուպցիայի հակազդման մեխանիզմները, ինչպես նաև կատարելագործել միջազգային փոխօգնության մեխանիզմները:		**Կատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն **Համակատարող մարմին՝** Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Միջազգային փորձի հիման վրա մշակվել են մեխանիզմներ ներդաշնակեցման ապահովման և գույքի վերադարձի դյուրինության երաշխավորման նպատակով՝ «Միջազգային իրավական փոխօգնության մասին» օրենքի ընդունմամբ:
Տարի	2025	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում միջազգային	

	հարցումների իրականացման ընթացքը: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից իրականացված միջազգային հարցումների մերժումն առավելապես պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետությունում գործող ինստիտուտի առանձնահատկությամբ և մի շարք օտարերկրյա պատմություններում այդ ինստիտուտի բացակայությամբ:	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝		
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.17 Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը		**Կատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Ազդարարման համակարգի մոդելի ընտրության արդյունքում անհրաժեշտության դեպքում ապահովվել է ազդարարման հարցով պատասխանատուների ընտրությունը և նշանակումը մասնագիտական, արժանիքահեն սկզբունքներով ու ընթացակարգերով, Արդարադատության նախարարությունը ճանաչվել է ազդարարման հարցերով պատասխանատուների
Տարի	2025	

		մասնագիտական գործունեության համակարգման և նրանց վերապատրաստման կազմակերպման լիազոր մարմին:
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Ազդարարման համակարգի գործնականում առաջացած խնդիրների, ինչպես նաև առկա միջազգային չափանիշների և հանձնառությունների վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքների հաշվառմամբ Արդարադատության նախարարության կողմից, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցությամբ, մշակվել են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի: Ստացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայում ընթացքի մեջ են Նախագծերի լրամշակման աշխատանքները:	Առկա չեն:

Լրացուցիչ նշումներ՝	
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.18 Զարգացնել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը	**Կատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Կատարողականի թիրախներ **2025**	Ընդլայնվել է ազդարարման հետ կապված վիճակագրություն վարելու պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակը:
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
Գործողության շրջանակում սույն զեկույցով վերը նշված իրավական ակտերի նախագծերի շրջանակներում անդրադարձ է կատարվում նաև ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգին՝ ներդնելով առավել գործուն մեխանիզմների:	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝	

<table>
<tr><td>ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.19

Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը</td><td>Կատարող մարմիններ՝
Արդարադատության նախարարություն
Գլխավոր դատախազություն
(համաձայնությամբ)

Համակատարող մարմիններ՝
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)
Բարձր տեխնոլոգիաների և արդյունաբերության նախարարություն
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Տեխնիկական բնութագրի հիման վրա գործարկվել է ազդարարման նոր արդիականացված էլեկտրոնային հարթակը:
Դիտարկվել է ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի ծրագրային ապահովման իրականացումը էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին հանձնելու նպատակահարմարության հարցը:</td></tr>
<tr><td>2025</td></tr>
<tr><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td>Գործողության իրականացումը պայմանավորված է Հակակոռուպցիոն ռազմավարության գործողություն 2.17-ի շրջանակներում սույն զեկույցով նշված իրավական ակտերի նախագծերի ընդունման և ուժի մտնելու հանգամանքի հետ: Այսպես, գործողությունից բխող գործողությունները ամբողջական եղանակով կարող են իրականացվել քննարկվող նախագծերի վերջնականացումից հետո:</td><td>Առկա չեն:</td></tr>
</table>

Լրացուցիչ նշումներ՝	
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.20 Կատարելագործել ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները, դիտարկել ազդարարման խրախուսման մեխանիզմների նախատեսման նպատակահարմարությունը	**Կատարող մարմիններ՝** Արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) **Համակատարող մարմիններ** Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)
Կատարողականի թիրախներ 2025	Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների նախագծերը հավանության են արժանացել Կառավարության կողմից և ներկայացվել են Ազգային ժողով:
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
Ազդարարման համակարգի գործնական խնդիրների, ինչպես նաև առկա միջազգային ստանդարտների և հանձնառությունների վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքների հաշվառմամբ Արդարադատության նախարարության կողմից «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցությամբ մշակվել են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում	Առկա չեն:

լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի: Ստացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում են Նախագծերի լրամշակման աշխատանքները:	
Լրացուցիչ նշումներ՝ Ազդարարման հետ կապված 2024 թվականի հաշվետվությունը և վիճակագրությունը ներկայացվել է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի 2024 թվականի տարեկան հաղորդմամբ, որը հրապարակային է և հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով:	

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2 .21

Իրականացնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման ազդեցության փորձաքննություն և վերանայել փաստացի վերահսկողություն իրականացնող անձանց պատասխանատվությունը, կիրառվող սանկցիաների համաչափությունը և կոռուպցիոն բնույթի հանցագործություններով խրախուսական կառուցակարգերը</td><td>Կատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմիններ՝
Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)
Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)
Քննչական կոմիտե (համաձայնությամբ)
Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Քաղաքացիական հասարակություն (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Իրականացնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման ազդեցության վերլուծություն:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն

Կատարողականի թիրախով նշված աշխատանքները գտնվում են ընթացիկ փուլում:</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td></td><td>Առկա չեն:</td></tr>
<tr><td colspan="3">Լրացուցիչ նշումներ՝</td></tr>
</table>

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.1
Մշակել և ներդնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ նաև ՆՈՒՀ) 5-6 տարեկան երեխաների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր</td><td>Կատարող մարմին՝
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Համակատարող մարմիններ՝

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Կրթության տեսչական մարմին
Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)
Տարածքային կառավարման մարմիններ (համաձայնությամբ)
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է և ծրագիրը իրականացվել է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 30% հաստատություն ներում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>Գործողության շրջանակում ծրագիրը ներդրված է և իրականացվում է ՀՀ բոլոր մարզերը և Երևան քաղաքը ընդգրկող 542 նախադպրոցական ուսումնական հաստատություններում, որը կազմում է պետական ՆՈՒՀ-երի շուրջ 50 տոկոսը: Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվող քաղաքականության համատեքստում, առավել քան կարևորվում է նախադպրոցական կրթության բովանդակության վերանայումն ու</td><td>Առկա չեն:</td></tr>
</table>

	արդիականացումը, մասնավորապես՝ նախադպրոցական տարիքի սաների կրթության և զարգացման արդյունքների գնահատման տեսանկյունից՝ հանրակրթության ոլորտում առաջարկվող գնահատման նոր համակարգի հիմնական շեշտադրումները նախադպրոցական կրթության ոլորտում արտացոլելու և նախադպրոցական կրթությունից դեպի հանրակրթություն սահուն անցումն ապահովելու նպատակով: Նախադպրոցական կրթության ոլորտում, տեղայնացնելով հանրակրթության ոլորտում առաջարկվող գնահատման նոր համակարգի հիմնական մոտեցումները և շեշտադրումները, հաշվի են առնվել ոլորտի առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և նախադպրոցական կրթության հիմնական ծրագրերի բովանդակային պահանջներով, ինչպես նաև՝ նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման տարիքային առանձնահատկություններով: Ըստ նպատակի, առաջարկվում է նախադպրոցական տարիքի սանի կրթության և զարգացման արդյունքների գնահատման երեք տեսակ. • հայտորոշիչ (նախնական) • ձևավորող (ընթացքում) • ամփոփիչ: Գնահատման երեք տեսակները հաջորդում են միմյանց, և յուրաքանչյուր տեսակ հանդիսանում է նախորդի տրամաբանական շարունակությունը: Այսպիսով, գիտելիքների գնահատումն իրականացվում է ծրագրի իրականացման գործընթացում՝ վերը նշված մեխանիզմներով:	
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.2
Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողների համար մշակել և ներդնել էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիր</td><td>Կատարող մարմին՝
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Համակատարող մարմիններ՝
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) Տարածքային կառավարման մարմիններ (համաձայնությամբ) Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է, և ծրագիրն իրականացվել է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 30% հաստատություններում, որոնցից կեսը՝ գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են: Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է և ծրագիրն իրականացվել է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 50% հաստատություններում, որոնցից կեսը՝ գյուղական բնակավայրերում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>Մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստման կարգի համաձայն արդեն իսկ վերապատրաստվել է ՀՀ բոլոր ՆՈՒՀ-երի մանկավարժական աշխատողների 60 %-ը: Վերապատրաստումը ներառել է էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով նյութեր: Յուրաքանչյուր վերապատրաստման ավարտին իրականացվում է մասնակիցների գիտելիքների ստուգում, որի արդյունքում նրանց տրամադրվում են համապատասխան կրեդիտներ:</td><td>Առկա չեն:</td></tr>
</table>

Լրացուցիչ նշումներ՝

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.3 **Հանրակրթության շրջանակում կատարելագործել «Հասարակագիտություն» առարկայի առարկայական ծրագիրը**	**Կատարող մարմին՝** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Կրթության տեսչական մարմին Տարածքային կառավարման մարմիններ (համաձայնությամբ) Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

	Կատարողականի թիրախներ	Պիլոտային ծրագիրն իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 15 դպրոցներում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում:
Տարի	2025	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 3-ի N 81-Ն և 2024 թվականի մայիսի 7-ի N 38-Ն հրամաններով հաստատվել են «Հասարակագիտություն» առարկայի առարկայական լրամշակված ծրագրերը, որոնցում ներառված է հակակոռուպցիոն բաղադրիչը, այս պահին այն ներդրված է Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում, հանրապետության բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ և 11-րդ դասարաններում կներդրվի 2025-2026, իսկ 12-րդ դասարաններում՝ 2026-2027 ուսումնական տարում:	Նկատի ունենալով կրթության ոլորտի իրավակարգավորումների առանձնահատկությունները սահմանված քանակական ցուցանիշները կկատարվեն 2025 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.4
Մշակել և ներդնել «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը</td><td>Կատարող մարմին՝
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Համակատարող մարմիններ՝

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Կրթության տեսչական մարմին
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է, և ծրագիրն իրականացվել է ՀՀ դպրոցների ընդհանուր թվի 30% հաստատություններում, որոնցից կեսը՝ գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>Վերապատրաստման ծրագիրը մշակվել և ներդրվել է: Վերապատրաստվել են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների «Հասարակագիտություն» առարկան դասավանդող բոլոր ուսուցիչները: Իրականացված ծրագրի արդյունքները գնահատվել են թեստային առաջադրանքների միջոցով:</td><td>Առկա չեն:</td></tr>
<tr><td colspan="3">Լրացուցիչ նշումներ՝</td></tr>
</table>

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.5 Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության և ուսուցման շրջանակում ներդնել էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր, մանկավարժական անձնակազմի համար նախատեսել նշված թեմաներով վերապատրաստումներ		**Կատարող մարմին՝** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համակատարող) Կրթության տեսչական մարմին Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Մշակվել և հաստատվել են վերապատրաստման ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները: Ծրագիրն իրականացվել է ուսումնական հաստատությունների ընդհանուր թվի 30% հաստատություններում, որոնցից կեսը՝ գյուղական համայնքներում:
Տարի	**2025**	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Մշակվել է «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈՒ ոլորտում» մոդուլի մեթոդական ձեռնարկը: Վերը նշված ձեռնարկի հիման վրա կազմվել է վերապատրաստման դասընթացի ծրագիր՝ «Կոռուպցիայի կանխարգելումը կրթության միջոցով» թեմայով: ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի համակարգմամբ՝ 2024 թվականին կազմվել է վերապատրաստվողների 2 խումբ (ՄԿՈՒ հաստատությունների մանկավարժների և տնօրեն-փոխտնօրենների համար)՝ ընդհանուր թվով 52 մարդ՝ համապատասխանաբար 4 մարզային և 20 Երևան քաղաքի ուսումնական հաստատությունում: Միևնույն ժամանակ, ներկայում վերանայվում է վերապատրաստման ծրագիրը և 2025 թվականի երրորդ եռամսյակում նախատեսվում է	Առկա չեն:

	անցկացնել վերապատրաստումներ:	

Լրացուցիչ նշումներ՝
Լրամշակված ձեռնարկի և մոդուլի նախագիծը ներկայացվել է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն /ՄԿՈՒԶԱԿ/՝ կարծիքի

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.6 **Հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում պետական մարմինների պատվերով իրականացնել հակակոռուպցիոն բնագավառի գիտական հետազոտություններ**	**Կատարող մարմին՝** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) Արդարադատության նախարարություն
Կատարողականի թիրախներ 2025	Ծրագիրն իրականացվել է առնվազն 5 հետբուհական ուսումնական հաստատություններում
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
Ներկայում 5 հաստատություններում հաստատվել են մի շարք ատենախոսության թեմաներ, տարբեր կրթական ծրագրերով իրականացվել և իրականացման փուլում են գտնվում մագիստրոսական թեզեր, մասնավորապես, «Կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական և քրեագիտական բնութագրերը», «Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան, մինչդատական վարույթի առանձնահատկությունները», «Կոռուպցիայի կանխարգելումը ՀՀ-ում և	Առկա չեն:

կանխարգելիչ մարմնի դերը», «Կոռուպցիայի կանխարգելման հիմնախնդիրները հանրային իշխանության մարմիններում», «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը, որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև», «Կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառները», «Ապօրինի հարստանալու հանցակազմի քրեաիրավական որակման հիմնախնդիրները», «Հանցավոր ճանապարհով ստացված գույք ձեռք բերելու, իրացնելու կամ իրացմանն աջակցելու և փողերի լվացման հանցակազմի տարանջատման հիմնախնդիրը» և «Տնտեսության ոլորտում կոռուպցիոն հանցագործությունների պատասխանատվության հիմնախնդիրները» թեմաներով: Գիտական հետազոտությունների ֆինանսավորումն իրականացվում է՝ ելնելով կատարվող հետազոտության բնույթից և ֆինանսավորման առանձնահատկություններից:	
Լրացուցիչ նշումներ՝	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.7 Ստեղծել հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակ՝ «Հայկական կրթական միջավայր» պորտալում նախատեսելով դրա համար առանձին բաժին		**Կատարող մարմիններ՝** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ
	Կատարողականի թիրախներ	Հավաքագրվել են հարթակում ներառման ենթակա հակակոռուպցիոն բաղադրիչ ունեցող առավել կարևոր նշանակություն ունեցող փաստաթղթերը:
Տարի	**2025**	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Գործողության իրականացումն ապահովելու նպատակով https://lib.armedu.am/category/33 կայքում արդեն իսկ գործում է հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված առանձին բաժին՝ համապատասխան գրականության հղումներով: Համապատասխան հակակոռուպցիոն թեմատիկ նյութերով համալրելու աշխատանքներ են իրականացվում: Հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակում տեղադրվել են	Առկա չեն:

	Հանձնաժողովի կողմից ներկայացված «Ինչպես դասավանդել «Կոռուպցիա» թեման» ուղեցույցը, «Երիտասարդների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» սահիկաշարը, Հանձնաժողովի կողմից պատրաստված իրազեկման հոլովակները, ինչպես նաև Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները և Վարքագծի կանոնագիրքը:	
Լրացուցիչ նշումներ՝ Հայկական կրթական միջավայրի հղումը՝ https://lib.armedu.am/:		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.8 Բարձրագույն ուսումնական հաստատություններում վերջիններիս համաձայնությամբ մշակել և ներդնել ուսանողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն դասընթաց/բաղադրիչ	**Կատարող մարմին՝** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ), Բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ), Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)
Կատարողականի թիրախներ **2025**	Տիպային դասընթացը դասավանդվում է ԲՈՒՀ-երի պարտադիր ուսումնական ծրագրի մեջ:
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ՝**
Հակակոռուպցիոն դասընթացների թեմաներին վերաբերող միասնական մոտեցում ցուցաբերելու նպատակով, ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների, մասնավորապես, Երևանի պետական, Մ. Հերացու անվան պետական բժշկական, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի ազգային ագրարային, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական համալսարաններում, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հետ համագործակցության արդյունքում 2024 թվականին մշակվել է տիպային դասընթացի մոդել, որը	Առկա չեն:

ներկայացվել է բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ վերջիններիս համաձայնությամբ պարտադիր ուսումնական ծրագրի մեջ ընդգրկելու համար: Ըստ բուհերից ստացված համապատասխան տեղեկատվության՝ բակալավրիատի և մագիստրատուրայի գրեթե բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում մշակված և ներդված են հակակոռուպցիոն բնագավառին առնչվող (կամընտրական կամ պարտադիր) դասընթացների ինքնավար մոդել, որոնք պարունակում են բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն բաղադրիչներ: Տիպային դասընթացի մոդելն ուղղված է հակակոռուպցիոն քաղաքականության, կոռուպցիայի կանխարգելման, պայքարի միջոցների, հանրությանը պայքարի գործիքակազմում ընդգրկելու, այդ համատեքստում՝ ինստիտուցիոնալ առկա և նոր լուծումների, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կառույցների և ներպետական իրավական ակտերի իրավադրույթների բովանդակության բացահայտմանը, դրանց վերլուծությանը: Վերջինիս նպատակն է ներկայացնել «կոռուպցիա» հասկացությունը, դրա հակաիրավական նշանակությունը և դրսևորման ձևերը, ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականությունը և դրա առանձնահատկությունները, տեսական վերլուծության ենթարկել կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային, ներպետական իրավական կառուցակարգերը, ներկայացնել հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա 2023-2026թթ. գործողությունների ծրագիրը, կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները, վերհանել ՀՀ-ում առավել տարածված կոռուպցիոն խնդիրներն՝ ըստ ոլորտի կարգավորման, ինչպես նաև կոռուպցիոն վարքի ինստիտուցիոնալ և նորմատիվ առանձնահատկությունները:	
Լրացուցիչ նշումներ՝	

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.9
Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար էթիկայի, բարեվարքության և հակակառուպցիոն վերապատրաստումների ծրագիր</td><td>Կատարող մարմին՝
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Համակատարող մարմիններ՝
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ),
Բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ),
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
(համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Ծրագիրն իրականցվել է ՀՀ ԲՈՒՀ-րի ընդհանուր թվի առնվազն 30% հաստատություններում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ՝</td></tr>
<tr><td></td><td>Նախորդ կիսամյակներում նախատեսված՝ «Կոռուպցիայի կանխարգելումը բուհական համակարգում» և «Վարքագծի կանոնները» թեմաներով վերապատրաստման նյութերը ներկայացվել են համալսարաններին՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումներ կազմակերպելու նպատակով:
Նշվածի արդյունքում մի շարք բուհեր արդեն իսկ կազմակերպվել են համապատասխան վերապատրաստումներ:</td><td>Առկա չեն:</td></tr>
</table>

Լրացուցիչ նշումներ՝

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.10 **Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներդնել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմիններում ուսանողական պրակտիկայի և փորձնակության անցկացման ծրագրեր, նախատեսել հակակոռուպցիոն ոլորտում արտասահմանյան ուսումնական հաստատություններում սովորելու համար կրթաթոշակների տրամադրման հնարավորություններ**		**Կատարող մարմին՝** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ), Բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ), Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Ուսանողական պրակտիկայի և փորձնակության պրակտիկան պիլոտային կարգով անցկացվել է 5 ուսումնական հաստատությունների ուսանողների համար: Ելակետային և ավարտական գիտելիքների գնահատումները կատարված են: Ուսանողական պրակտիկայի և փորձնակության պրակտիկան անցկացվել է 5 ուսումնական հաստատությունների ուսանողների համար: Ելակետային և ավարտական գիտելիքների գնահատումները կատարված են:
Տարի	2025	

	Կատարված աշխատանքների նկարագրություն	Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ՝
	Նախորդ կիսամյակներում նախատեսված աշխատանքների կատարման արդյունքում ուսանողական պրակտիկայի և փորձնակության պրակտիկան անցկացվում է 7 ուսումնական հաստատությունների ուսանողների համար՝ ընդլայնելով բուհերի և հակակոռուպցիոն պետական մարմինների միջև համագործակցության շրջանակը: Պրակտիկաները կազմակերպվում են ուսումնական գործընթացի շրջանակում, ունեն հստակ ծրագիր և գնահատման համակարգ, որով էլ գնահատվում են:	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.11 Նպաստել ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացմանը՝ դպրոցներում հիմնելով աշակերտական հակակոռուպցիոն ակումբներ, իսկ բուհերում՝ հակակոռուպցիոն լաբորատորիաներ՝ հակակոռուպցիոն հետազոտություններ, իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն անցկացնելու և հակակոռուպցիոն ծրագրերին հետազոտական և անալիտիկ բնույթի այլ աջակցություն տրամադրելու նպատակով		**Կատարող մարմին՝** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համակատարող) Բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ) Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Ծրագրի ներդրման արդյունքում դպրոցներում ոչ ֆորմալ կրթության միջոցով փոխանցվում են հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ գիտելիքներ, իսկ բուհերում՝ իրականացվում են հակակոռուպցիոն հետազոտություններ, այլ հետազոտական աշխատանքներ:
Տարի	**2025**	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	«Հակակոռուպցիոն կրթություն» խմբակի ծրագիրը 11-րդ դասարանի աշակերտների համար հաստատվել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի հունվարի 29-ի թիվ 247-Ա/2 հրամանով և շրջաբերական գրությամբ տրամադրվել է հանրակրթական ուսումնական հաստատություններին՝ հնարավորության դեպքում խմբակի ծրագրի ներդրումը 2025-2026թթ. ուսումնական տարում ապահովելու համար: ԲՈՒՀ-երում հակակոռուպցիոն լաբորատորիաների (R&D)՝ հակակոռուպցիոն հետազոտությունների, իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն անցկացնելու և հակակոռուպցիոն	Կրթության կազմակերպումը և ոլորտի իրավական կարգավորումները ունեն մի շարք առանձնահատկություններ, մասնավորապես հանրակրթության դեպքում պետական չափորոշիչը, իսկ բուհերի դեպքում իրենց ակադեմիական ազատությունը, որոնցով պայմանավորված նախատեսված ծրագրերը իրականացվում են գործող կարգավորումների շրջանակում:

	ծրագրերին հետազոտական և անալիտիկ բնույթի այլ աջակցություն տրամադրելու նպատակով՝ վեր է հանվել հակակոռուպցիոն բնագավառի ուղղությամբ գիտական հետազոտությունների իրականացման շուրջ 30 թեմաներ, որոնց ուղղությամբ հետազոտություններ կատարելու նպատակով դրանք տրամադրվել են բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնող թվով 11 ուսումնական հաստատությունների, ինչը կազմում է բարձրագույն ուսումնական հաստատությունների շուրջ 30%-ը: Հաշվետու ժամանակահատվածում բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվում են համապատասխան հետազոտական աշխատանքներ: Հետազոտությունների հումանիտար բնույթի առանձնահատկությամբ պայմանավորված՝ այն չի ենթադրում առանձին ենթակառուցվածքների ստեղծում: Միաժամանակ, դպրոցներում ոչ ֆորմալ կրթության միջոցով հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ գիտելիքներ փոխանցելու նպատակով՝ Հանձնաժողովը մշակել է «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքություն» վերտառությամբ ուսուցչի ձեռնարկը, որը կարող է նաև ուսումնաօժանդակ նյութ լինել աշակերտական հակակոռուպցիոն ակումբների ղեկավարների համար:	
Լրացուցիչ նշումներ՝ Ձեռնարկը ներկայացվել է Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն՝ կարծիք ստանալու նպատակով:		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.12 Մշակել և ներդնել հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագիր, այդ թվում՝ հանրային իրազեկման ծրագրի իրականացման արդյունքների գնահատման համակարգ		**Կատարող մարմին՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) **Համակատարող մարմիններ՝** ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններ Իրավապահ մարմիններ Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) Հանրային հեռարձակող խորհուրդ Հանրային հեռարձակողներ Մասնավոր հեռարձակողներ (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Ըստ մշակված հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրի և հաշվի առնելով հանրային կարծիքի ուսումնասիրության գնահատման արդյունքները՝ հակակոռուպցիոն ոլորտին առնչվող տեղեկությունները տարածվում են՝ ապահովելով հասարակության իրազեկումը և տեղեկացվածությունը:
Տարի	**2025**	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրությունների մեթոդաբանության մշակման և հաստատման առնչությամբ հարկ է նշել, որ Հանձնաժողովը 2024 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 07-Լ որոշմամբ, հաստատել է հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությունը և հարցաշարը:	Հանրային կարծիքի ուսումնասիրության գործընթացի մեկնարկը նախատեսվում էր 2025 թվականի սկզբին, որն իրականացվելու էր ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարություն» ծրագրի, աջակցությամբ: Սակայն, գործընթացը կասեցվել է՝ ծրագրի ֆինանսավորման կասեցման պատճառով:

	Միևնույն ժամանակ, մշակվել և Ներքին գործերի նախարարի հրամանով հաստատվել է հանրային հաղորդակցության ռազմավարական ծրագիրը: Մշակվել են նաև ՆԳՆ հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության ռազմավարության հիմնական սկզբունքները: Ռազամավարական ծրագրի մշակման շրջանակներում իրականացվելիք արշավների մեջ ներառվել է նաև կոռուպցիայի դեմ պայքարի բաղադրիչը, որը նպատակ ունի բարձրացնել ՆԳՆ գործունեության թափանցիկությունը, ապահովել հաշվետվողականության բարձր մակարդակ՝ նպաստելով հանրության վստահության ամրապնդմանը:	
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.13
Զարգացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունները հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում</td><td>Կատարող մարմիններ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմիններ՝

ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններ
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">ԿԿՀ համապատասխան բաժինների համար պարբերաբար իրականացվում են սեփական կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր, վերապատրաստումներ:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
</table>

	1. Եվրոպայի խորհրդի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համագործակցությամբ՝ 2024 թվականի դեկտեմբերի 1-ից մեկնարկել է «Կոռուպցիայի կանխարգելման ներածություն» խորագրով HELP առցանց դասընթացը: Դասընթացի առանձին մոդուլներ նվիրված են քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությանը, ազդարարների պաշտպանությանը, պետական գնումներում կոռուպցիոն ռիսկերի կառավարմանը, հանրային գործառույթներում աուդիտին, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոններին, շահերի բախմանը, նվերների ընդունման սահմանափակումներին: Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են դասընթացին և ստացել մասնակցության հավաստագրեր: 2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման, ինչպես նաև ԿԿՀ աշխատակիցների սեփական կարողությունների զարգացման նպատակով՝ հաշվետու ժամանակահատվածում գործարկվել է Հանձնաժողովի կողմից մշակված էլեկտրոնային ուսուցման հարթակը: Կրթական հարթակը ծառայում է որպես Հանձնաժողովի կրթական գործառույթի ապահովման գործիք՝ տրամադրելով բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կրթական մոդուլների, թվային գրադարանի, կրթական ինտերակտիվ լուծումների հասանելիություն: Հարթակում այժմ հասանելի են հետևյալ խորագրերով դասընթացները՝ «Կոռուպցիա. կանխարգելման հիմնադրույթները»,«Էթիկական կառավարումը և կոռուպցիայի կանխարգելումը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար», «Կուսակցությունների ֆինանսավորման համակարգը ՀՀ-ում», «Գործարար բարեվարքությունը և կոռուպցիոն ռիսկերի	Առկա չեն:

	կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում», «Շահերի բախումը որպես բարեվարքության համակարգի տարր»: 3. Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների աջակցության ծրագրի շրջանակներում մարտի 8-10-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակիցների համար կազմակերպվել էր եռօրյա վերապատրաստում, որի նպատակն էր զարգացնել և ամրապնել Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունները հանրային ծառայողների վարքագծի կանոնների կիրարկման և անհամատեղելիության ու օրենքով նախատեսված այլ սահմանափակումների թեմաներով:	
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.14 Հզորացնել ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների ցանցերի կարողությունները՝ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆոնդհայթայթման իրականացման նպատակով		**Կատարող մարմին՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) **Համակատարող մարմիններ՝** ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններ Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Կարողությունների հզորացման ծրագիրն իրականացվել է առնվազն 6 ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների ցանցերի համար:
Տարի	**2025**	

	Կատարված աշխատանքների նկարագրություն	Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ
	Հարկ է նշել, որ դեռևս 2024 թվականին Հանձնաժողովը Արդարադատության նախարարությանն առաջարկել է նշված գործողության կատարող մարմինների ցանկից հանել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, քանի որ սույն գործողության թիրախը դուրս է Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից:	
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.15
Ներդնել հակակոռուպցիոն կրթության ոլորտի միասնական իրավակարգավորումներ</td><td>Կատարող մարմիններ՝
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Համակատարող մարմիններ՝

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)
Արդարադատության նախարարություն</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Միջազգային լավագույն փորձի լույսի ներքո մշակվել է կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման մասին կրթության մեկ միասնական օրենքի նախագիծ, որում հստակեցվել են հակակոռուպցիոն կրթության ընդհանուր նպատակը, մեթոդաբանությունը ինստիտուցիոնալ համակարգը և այլ առանցքային հիմնահարցեր:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
</table>

	Գործողության կատարող մարմինների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դիրքորոշման համաձայն՝ հաշվի առնելով կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի և հակակոռուպցիոն կրթության կազմակերպման առանձնահատկությունները, հարկ է գործող օրենսդրական կարգավորումների շրջանակում ամրագրել հակակոռուպցիոն կրթության վերաբերյալ ընդհանուր դրույթներ, իսկ հակակոռուպցիոն կրթության մեթոդաբանությունը և այլ առանցքային հիմնահարցերը ենթաօրենսդրական ակտով կարգավորելու համար սահմանել լիազորող նորմ: Վերոնշյալի համատեքստում՝ Հանձնաժողովն առաջարկել էր Արդարադատության նախարարությանը 3.15-րդ կետի կատարողական թիրախը ձևակերպել հետևյալ կերպ՝ «Միջազգային լավագույն փորձի լույսի ներքո մշակվել և օրենսդրական մակարդակում ամրագրվել են հակակոռուպցիոն կրթության վերաբերյալ դրույթներ, որոնցով հստակեցվել են հակակոռուպցիոն կրթության ընդհանուր նպատակը, մեթոդաբանությունը և այլ առանցքային հիմնահարցեր»:	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝		

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 4. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.1
Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր՝ զարգացնելով կորպորատիվ կառավարման մշակույթը</td><td>Կատարող մարմին՝
Էկոնոմիկայի նախարարություն

Համակատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն
Կորպորատիվ կառավարման կենտրոն
(համաձայնությամբ)
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ/ գործարար շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ և գործարար անդամակցությամբ զբաղվող կազմակերպություններ
(համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Կազմակերպվել և իրականացվել են Կանոնագրքի իրավակիրառ պրակտիկան խրախուսող և խթանող առնվազն 2 միջոցառումներ (պետական աջակցության առնվազն 1 ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանությամբ կորպորատիվ կառավարման կանոնագրքի կիրառումը սահմանել որպես աջակցություն ստանալու չափանիշներից մեկը, Քրեական օրենսգրքով Կանոնագրքի կիրառումը դիտարկվել է իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառող կամ մեղմացնող հանգամանք)՝ այդ թվում նաև տեղեկատվական արշավներ, իրազեկման բարձրացման միջոցառումներ առնվազն 3 դասընթացներ:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
</table>

	Ընկերությունների կողմից կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալը հնարավորինս խթանելու, գործընթացը պարզեցնելու նպատակով՝ մշակվել և Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել են կորպորատիվ կառավարման հայտարարագրի թվով 3 ձևաչափեր՝ ըստ ընկերությունների կորպորատիվ կառավարման հասունության մակարդակի: Ընկերությունները, գնահատելով իրենց կորպորատիվ կառավարման մակարդակը, կարող են ընտրել և լրացնել համապատասխան ձևաչափի հայտարարագիրը: 3 ձևաչափերը մշակվել են ընկերություններին Կանոնագրքի սկզբունքների և դրանց էությունը պարզաբանող դրույթների աստիճանական ներդրման հարցում աջակցելու, վերջիններիս կորպորատիվ կառավարման համակարգի անհարկի ծանրաբեռնումից և ֆորմալ համապատասխանության ապահովումից խուսափելու նպատակով: Բացի այդ, մշակվել և Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել են Կանոնագրքի կիրարկմանը նպաստող 2 ուղեցույցներ՝ 1-ինը՝ կորպորատիվ կառավարման առաջընթացի մատրիցան: Այն Կանոնագրքի կիրարկումն ապահովող ուղեցույց է, որով ընկերությունները կարող են գնահատել իրենց կորպորատիվ կառավարման հասունության աստիճանը: Մյուս ուղեցույցը նվիրված է «Հետևի՛ր կամ բացատրի՛ր» սկզբունքին: Կանոնագրքի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործողություններ նախարարության կողմից իրականացվել են պարբերաբար, թե՛ վերոնշյալ փաստաթղթերի մշակման շրջանակներում, թե՛ դրանից դուրս: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ԵՄ ֆինանսավորմամբ և Էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ իրականացվող Հայաստանի կապիտալի շուկայի աջակցման ծրագրի շրջանակներում իրականացվել է առանձին վեբինար՝ նվիրված	Առկա չեն:

	կորպորատիվ կառավարմանը: Կորպորատիվ կառավարման կենտրոնի կողմից իրականացվել է «Կորպորատիվ քարտուղարի դերը ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման հարցում» վերտառությամբ սեմինար: Վերոնշյալ միջոցառումները մեծապես բարձրացրել են կորպորատիվ կառավարման սկբունքների վերաբերյալ մասնավոր հատվածի իրազեկվածության մակարդակը, աջակցել են ընկերություններին Կանոնագրքի սկզբունքների և դրանց էությունը պարզաբանող դրույթների աստիճանական ներդրման հարցում: Արդյունքում, ստացված տվյալներով 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ թվով 10 ընկերություններ հրապարակել են կորպորատիվ կառավարման հայտարարագրեր: Կորպորատիվ կառավարման կանոնագրքին աջակցող վերոնշյալ փաստաթղթերի մշակումն իրականացվել է շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ: Թեմայի շուրջ հանրային քննարկումները հնարավոր է եղել ապահովել վերոնշյալ միջոցառումների շրջանակներում:	
Լրացուցիչ նշումներ՝		
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.2 Պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր, կատարելագործել հաշվետվողականության մեխանիզմները		**Կատարող մարմիններ՝** Արդարադատության նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն **Համակատարող մարմին՝** Ֆինանսների նախարարություն
	Կատարողականի թիրախներ	Մշակվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ,

Տարի	2025	որով կատարելագործվել են պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տնօրենի և խորհրդի անդամների թափանցիկ, արժանիքահեն նշանակման, խորհրդի անդամների անկախության չափորոշիչները, հաշվետվողականության և թափանցիկության, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերը, արտաքին աուդիտի պահանջները: Օրենսդրական փոփոխություն ների փաթեթը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Գործողության շրջանակներում նախատեսվում է պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար ներդնել նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրքը կիրառելու պահանջ: Վերոգրյալի հաշվառմամբ՝ էկոնոմիկայի նախարարության կողմից մեկնարկել են համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ: Նախագծերի մշակման աշխատանքներին աջակցություն է ցուցաբերում նաև Ասիական զարգացման բանկը և «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Նախագծերի մշակման գործընթացն առավել ներառական իրականացնելու նպատակով կազմակերպվել են մի շարք հանրային քննարկումներ շահագրգիռ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավմամբ:	Առկա չեն:

Լրացուցիչ նշումներ՝

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.3 Պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգեր:		**Կատարող մարմին՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) **Համակատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն
	Կատարողականի թիրախներ	1. Հզորացվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունները: 2. ԿԿՀ աշխատակիցների համար կազմակերպվել և անցկացվել են առնվազն 5 վերապատրաստման դասընթացներ: 3. Պիլոտային գնահատում անցած կազմակերպությունների համար կազմակերպվել և անցկացվել են առնվազն 3 վերապատրաստման դասընթացներ:
Տարի	**2025**	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	2024 թվականի հունվարի 22-ից 26-ը «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ԵՄ թվինինգ ծրագրի փորձագետները քննարկումներ և վերապատրաստում են անցկացրել կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատման գործընթացի մասնակից կազմակերպությունների հետ («Երևանի թիվ 119 մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Հայանտառ» ՊՈԱԿ և	Առկա չեն:

	«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (ԱՆԻՖ)), որոնց ընթացքում ներկայացրել են կոռուպցիոն ռիսկերի գնահատման չափորոշիչները և հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի մշակման գործընթացը: 2023թ. նոյեմբերի 21-22-ին Հանձնաժողովը կազմակերպել է վերապատրաստում «Պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի կառավարում» թեմայով, որին մասնակցել են պետական մասնակցությամբ կազմակերպությունների և համապատասխան գերատեսչությունների, ինչպես նաև պիլոտային գնահատում անցած կազմակերպությունների ներկայացուցիչները (ընդհանուր՝ 35 մասնակից): Վերապատրաստումն անցկացվել է «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ԵՄ թվինինգ ծրագրի շրջանակում: 2024 թվականի դեկտեմբերի 19-ից 20-ը տեղի է ունեցել «Կորպորատիվ կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում» աշխատաժողովը, որը կազմակերպվել էր Կորպորատիվ կառավարման կենտրոնի, Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի, ԱՄՆ առևտրի դեպարտամենտի կոմերցիոն իրավունքի զարգացման ծրագրի, Ասիական զարգացման բանկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համագործակցությամբ: Աշխատաժողովին մասնակցել են ՀՀ պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների (այդ թվում՝ պիլոտային գնահատում անցած), պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և փորձագիտական շրջանակի շուրջ 60 ներկայացուցիչներ: 2025թ. ապրիլի 21-ին գործարկվել է ԿԿՀ-ի էլեկտրոնային ուսուցման e-learning հարթակը, որտեղ տեղադրվել է նաև «Գործարար բարեվարքությունը և կոռուպցիոն ռիսկերի	

	կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում» դասընթացը: 2025 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում դասընթացը դիտել է 66 անձ, որոնցից 30-ը ստացել են հավաստագրեր: Նշված բոլոր դասընթացներին մասնակցություն են ունեցել նաև Հանձնաժողովի աշխատակիցները:	
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.4. Հզորացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ կարողությունները՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության համատեքստում	**Կատարող մարմին՝** Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնությամբ) **Համակատարող մարմին՝** Մասնագիտացված ՔՀԿ-ներ (համաձայնությամբ)
Կատարողականի թիրախներ 2025	Կազմակերպվել և անցկացվել են առնվազն 4 վերապատրաստման դասընթացներ ՄԻՊ համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների համար՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
1. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի նախաձեռնությամբ 2025 թվականի ապրիլի 14-ին կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց վարչարարության իրականացման	Առկա չեն:

գործընթացում գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Դասընթացի նպատակն էր զարգացնել աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունները մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության համատեքստում: Դասընթացը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/reel/3069202600047881: 2. Մարդու իրավունքների պաշտպանի և Եվրոպայի խորհրդի համագործակցությամբ 2025 թվականի հունիսի 17-ին տեղի է ունեցել միջազգային համաժողով «Բիզնես և մարդու իրավունքներ. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» խորագրով (https://www.ombuds.am/am/site/ViewNews/3423): Միջոցառումը կազմակերպվել է «Մարդու իրավունքներ և շրջակա միջավայրի համար պատասխանատու բիզնես պրակտիկա» ծրագրի շրջանակում: Համաժողովի նպատակն էր խթանել երկխոսությունը գործարարության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում միջազգային ստանդարտների կիրառման ուղղությամբ, ուսումնասիրել մի շարք երկրների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների և Բելգիայի փորձը գործարար հարաբերություններում մարդու իրավունքների ապահովման և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում բարելավել ոլորտի դերակատարների, այդ թվում՝ Պաշտպանի աշխատակազմի կարողություններն ու բարձրացնել բիզնես համայնքի իրազեկվածությունը իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության ոլորտում: Միջոցառման շրջանակում տեղի են ունեցել պանելային քննարկումներ ու դասընթաց-քննարկումներ, որոնց ընթացքում պետական մարմինների ներկայացուցիչները, փաստաբանները և միջազգային փորձագետները քննարկել ու ներկայացրել են ոլորտին առնչվող մի շարք կարևոր հարցեր: Քննարկվել են միջազգային ներդրումների հնարավոր ազդեցությունը մարդու իրավունքների և շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև իրավական կարգավորումների անհրաժեշտությունը և դրանց ներառման հնարավորությունները ներդրումային քաղաքականության շրջանակում:	

Օրինակներ են ներկայացվել Ֆրանսիայի և Գերմանիայի փորձից, հատուկ ուշադրություն է դարձվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպերին և դրանց կիրառելիությանն այս համատեքստում: Անդրադարձ է կատարվել նաև գործարարության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանը: Մասնակիցները վերլուծել են գործարար գործունեության շրջանակում առաջացող իրավական խնդիրները՝ ներառյալ հարկային քաղաքականության թափանցիկությունն ու կանխատեսելիությունը, ներդրող-պետություն վեճերի կարգավորման մեխանիզմները, ինչպես նաև իրավունքի իրական պաշտպանության գործիքակազմի հնարավոր բարելավումները: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ներկայացվել են առավել հաճախ արձանագրվող խնդիրները, մասնավորապես՝ հարկային օրենսդրության կիրառման, իրականացվող վարչարարության, իրազեկման պակասի, մաքսազերծման գործընթացների, մաքսային վճարների հաշվարկման և մի շարք այլ ուղղություններով:	
Լրացուցիչ նշումներ՝	

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.5
Բարձրացնել բիզնես համայնքի իրազեկվածության մակարդակն իրենց իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության և հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ</td><td>Կատարող մարմին՝
Էկոնոմիկայի նախարարություն

Համակատարող մարմիններ՝
Արդարադատության նախարարություն
Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնությամբ)
Մասնագիտացված ՔՀԿ-ներ (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Կազմակերպվել և իրականացվել են իրազեկվածության բարձրացման առնվազն 4 միջոցառումներ բիզնես համայնքի շրջանում՝ իրենց իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության և հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>1. Մարդու իրավունքների պաշտպանի և Եվրոպայի խորհրդի համագործակցությամբ 2025 թվականի հունիսի 17-ին տեղի է ունեցել միջազգային համաժողով «Բիզնես և մարդու իրավունքներ. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» խորագրով (https://www.ombuds.am/am/site/ViewNews/3423): Միջոցառումը կազմակերպվել էր «Մարդու իրավունքներ և շրջակա միջավայրի համար պատասխանատու բիզնես պրակտիկա» ծրագրի շրջանակում:
Համաժողովի նպատակն էր խթանել երկխոսությունը գործարարության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև կորպորատիվ սոցիալական</td><td>Առկա չեն:</td></tr>
</table>

	պատասխանատվության ոլորտում միջազգային ստանդարտների կիրառման ուղղությամբ, ուսումնասիրել մի շարք երկրների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների և Բելգիայի փորձը գործարար հարաբերություններում մարդու իրավունքների ապահովման և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում, բարելավել ոլորտի դերակատարների կարողություններն ու բարձրացնել բիզնես համայնքի իրազեկվածությունը իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության ոլորտում: Միջոցառման շրջանակում տեղի են ունեցել պանելային քննարկումներ: Առաջին պանելի ընթացքում քննարկվել են միջազգային ներդրումների հնարավոր ազդեցությունը մարդու իրավունքների և շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև իրավական կարգավորումների անհրաժեշտությունը և դրանց ներառման հնարավորությունները ներդրումային քաղաքականության շրջանակում: Օրինակներ են ներկայացվել Ֆրանսիայի և Գերմանիայի փորձից, հատուկ ուշադրություն է դարձվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպերին և դրանց կիրառելիությանն այս համատեքստում: Երկրորդ պանելային քննարկումը նվիրված էր գործարարության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանը: Մասնակիցները վերլուծել են գործարար գործունեության շրջանակում առաջացող իրավական խնդիրները՝ ներառյալ հարկային քաղաքականության թափանցիկությունն ու կանխատեսելիությունը, ներդրող-պետություն վեճերի կարգավորման մեխանիզմները, ինչպես նաև իրավունքի իրական պաշտպանության գործիքակազմի հնարավոր բարելավումները: Երրորդ պանելի շրջանակում համաժողովը	

	միջդիսցիպլինար հարթակ է հանդիսացել քաղաքականություն մշակողների, իրավաբանների, բիզնեսի և ներդրումային ոլորտի ներկայացուցիչների համար՝ քննարկելու, թե ինչպես կարելի է ապահովել մարդու իրավունքների լիարժեք պաշտպանությունը մրցակցային և արագ զարգացող տնտեսական միջավայրում: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ներկայացվել են առավել հաճախ արձանագրվող խնդիրները, մասնավորապես՝ հարկային օրենսդրության կիրառման, իրականացվող վարչարարության, իրազեկման պակասի, մաքսազերծման գործընթացների, մաքսային վճարների հաշվարկման և մի շարք այլ ուղղություններով: 2. Հանրային իրազեկման նպատակով «Բիզնես և մարդու իրավունքներ. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» խորագրով համաժողովի վերաբերյալ պատրաստվել է ռեպորտաժ, որը հասանելի է https://www.youtube.com/watch?v=2gW3q3tu8Wg հղումով: 3. 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Լիբերալ քաղաքականության ինստիտուտի հետ համագործակցությամբ մշակվել է «Կանանց տնտեսական իրավունքների իրացման երաշխիքներն ու խոչընդոտները Հայաստանում» վերտառությամբ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը: Զեկույցը ներառում է ինչպես ոլորտում արձանագրված խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկները, այլև գործարարության ոլորտում կանանց տնտեսական իրավունքների շրջանակն ու երաշխիքները: Զեկույցը, ներառյալ գործարարության ոլորտում կանանց տնտեսական իրավունքների շրջանակն ու երաշխիքները, 2025 թվականի հունիսի 25-ին ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցչի կողմից ներկայացվել է Լիբերալ քաղաքականության ինստիտուտի կողմից իրականացվող «Հզորացնելով կանանց իրավունքների պաշտպաններին Հայաստանում» ծրագրի	

	փակման արարողությանը: Մանրամասները հասանելի են https://www.ombuds.am/am/site/ViewNews/3433 հղումով: 4. Միևնույն ժամանակ, Լիբերալ քաղաքականության ինստիտուտի հետ համագործակցությամբ նախատեսվում է փոդքասթի նկարահանում ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցչի մասնակցությամբ նույն զեկույցի համատեքստում: 5. Գործարարության ոլորտում իրավունքների վերաբերյալ տարատեսակ քննարկումներ ու իրազեկման աշխատանքներ են տարվել Մարդու իրավունքների պաշտպանի մարզային այցերի ընթացքում: Ընդ որում՝ գործարարության ոլորտում իրավունքները քննարկվել են առանձին գործարարությամբ զբաղվող անձանց հետ: Այդպիսի միջոցառումներ են ձեռնարկվել, ի թիվս այլնի Սյունիքի, Տավուշի մարզ իրականացված և այլ մարզային այցերի ընթացքում: Միջոցառումները հասանելի են հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3396, https://ombuds.am/am/site/ViewNews/3394, https://ombuds.am/am/site/ViewNews/3392, https://www.youtube.com/watch?v=aHl3iG8eB0Q:	
Լրացուցիչ նշումներ՝ Հանրային իրազեկման նպատակով նշված մարզային այցերի առնչությամբ պատրաստվել են ռեպորտաժներ, որոնք տարածվել են Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական սոցիալական հարթակներում: Հասանելի են https://youtu.be/yUejjJ4KJAg?si=_Vy-UOWjUxXoa7Vq, https://youtu.be/6poNvzZAgBA?si=QwiqbtZxPewNUAUc հղումներով:		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.6 Կատարելագործել ԿԿՀ-ի գործիքակազմը մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում		**Կատարող մարմին՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) **Համակատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն
	Կատարողականի թիրախներ	Մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով ԿԿՀ-ն օժտվել է բիզնես ոլորտի հետ կոնֆիդենցիալ հանդիպումներ կազմակերպելու իրավասությամբ և ռեսուրսներով՝ վեր հանելու նեղ ոլորտային կոռուպցիոն սխեմաներն ու այլ խնդիրները: Օրենսդրական փոփոխությունների փաթեթը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ-ի ընդունմանը:
Տարի	**2025**	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	2025 թվականի առաջին կիսամյակում կատարողականի թիրախով սահմանված գործողությունները չեն իրականացվել: Դեռևս 2024 թվականի Հանձնաժողովն Արդարադատության նախարարությանն առաջարկել է 4.6-րդ գործողությունը փոխարինել հետևյալ ձևակերպմամբ գործողությամբ՝ «Անցկացնել գործարար բարեվարքության, կորպորատիվ կառավարման և կոռուպցիոն ռիսկերի կառավարման վերաբերյալ վերապատրաստումներ պետական մասնակցությամբ կազմակերպությունների համար»:	Հանձնաժողովի առաջարկությանը ընթացք չի տրվել:
Լրացուցիչ նշումներ՝		

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.7
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</td><td>Կատարող մարմին՝
ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր

Համակատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Ապահովվել է տվյալների արժանահավատության հանրային վերահսկողության հնարավորությունը: Ապահովվել է «իրական շահառու» եզրույթի իրավական բովանդակության միասնականությունը՝ տարբեր իրավական ակտերում:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն

Առանց պետական տուրք վճարելու տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից հասանելի են՝ իրավաբանական անձի իրական շահառուի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, իրական շահառու դառնալու ամսաթիվը, իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերը.
Մշակվել և քննարկման է ներկայացվել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Օրենսդրական նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության թվայնացման խորհրդի կողմից: Ներկայումս այն գտնվում է լրամշակման փուլում:</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ

Առկա չեն:</td></tr>
</table>

Լրացուցիչ նշումներ՝

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.8

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ</td><td>Կատարող մարմին՝
ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր

Համակատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն
Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
Կենտրոնական դեպոզիտարիա
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">1. Ապահովվել է պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի փոխգործակցելիությունը ներպետական էլեկտրոնային շտեմարանների հետ՝ մասնավորապես ԿԿՀ-ի էլեկտրոնային համակարգի, բաժնետերերի ռեեստրի, պետական գնումների էլեկտրոնային համակարգի հետ:
2. Ներդրվել է տվյալների ինքնաշխատ փոխանակման գործուն մեխանիզմ:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
</table>

	Կատարված աշխատանքների նկարագրություն 2025 թվականի հունիսի 10-ին ապահովվել է գործակալության փոխկապակցումը Կառավարության փոխգործելիության հարթակին ինտեգրված՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վեբ ծառայություններին՝ իրական շահառուների վերաբերյալ առկա համապատասխան տեղեկատվության հասանելիության նպատակով:	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ** Բաժնետերերի ռեեստրի հետ փոխգործելիությունը դեռևս ապահովված չէ, սակայն ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության նոր տեղեկատվական համակարգի մշակման աշխատանքների շրջանակներում Արդարադատության նախարարության, Պետական ռեգիստրի, Կենտրոնական բանկի, Կենտրոնական դեպոզիտարիայի և Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորվելու է աշխատանքային խումբ, որը քննարկելու է բաժնետերերի ռեեստրի տվյալները Պետական ռեգիստրին հասանելի դարձնելու հետ կապված օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակման հարցերը:
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.9 Բարձրացնել հարկային վարչարարության արդյունավետությունը, կատարելագործել ստվերային տնտեսության դեմ պայքարի գործիքակազմը և մեղմացնել բիզնես-հարկային մարմին փոխհարաբերություններում սուբյեկտիվիզմը ու կոռուպցիոն ռիսկերը	**Կատարող մարմին՝** Պետական եկամուտների կոմիտե (համաձայնությամբ) **Համակատարող մարմին՝** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Կատարողականի թիրախներ **2025**	Նոր էլեկտրոնային գործիքակազմերը կիրառվում են պրակտիկայում:
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
Դեռևս 2024 թվականից հարկային մարմնում գործարկվել է վարչական իրավախախտումների գործերով վարույթների հարուցման և վարման էլեկտրոնային համակարգ: Ներկայում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված հարկային մարմնի քննությանը ենթակա հոդվածներով հարկ վճարողների պաշտոնատար անձանց կատարած իրավախախտումների գործերով վարույթները շարունակվում են հարուցվել և վարվել նշյալ համակարգի միջոցով: Հարկ է նշել, որ 2024 թվականի փետրվարի 28-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-104-Ն օրենքը (ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից), որի նպատակը չվճարված պարտավորությունների արգելադրման նոր գործիքակազմի ներդրումն է: Արդյունքում առաջացել է խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտություն, որի նպատակով 2025 թվականի փետրվարի 21-ին կազմակերպվել է գնման գործընթաց և ընտրված մասնակցի հետ 2025 թվականի ապրիլի 28-ին կնքվել է	

պայմանագիր: Այսպես, 2024 թվականի ապրիլի 25-ից ներդրված նոր համակարգի միջոցով մի քանի աղբյուրից հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները ֆիզիկական անձանց վերադարձվում են ինքնաշխատ եղանակով և հարկային մարմին դիմելու անհրաժեշտություն այլևս չկա: Գործընթացը շարունակվել է իրականացվել նաև 2025 թվականին: Միաժամանակ, հարկ է նշել, որ ՊԵԿ-ի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԺ քննարկման (Կ-1116-30.06.2025-ՏՀ-011/0): Նախագծի ընդունման արդյունքում, ի թիվս այլնի, ներդրվելու է Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտի կարգավիճակի հաստատման մասին տեղեկանքի տրամադրման պարզեցված և ավտոմատացված համակարգ: Ստեղծվելու է ռեզիդենտության հավաստագրերի էլեկտրոնային եղանակով տրամադրման համակարգ, որը հասանելի կլինի նաև ՊԵԿ պաշտոնական կայքէջում: Համակարգի ներդրման նպատակով՝ 2025 թվականի փետրվարի 26-ին կազմակերպվել է գնման գործընթաց և ընտրված մասնակցի հետ 2025 թվականի ապրիլի 13-ին կնքվել է պայմանագիր: Համակարգի ամբողջական ներդրումն ավարտվելու է 2025 թվականի դեկտեմբերի 30-ին:	
Լրացուցիչ նշումներ՝	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.10 Կատարելագործել հանրային գնումների ոլորտում շահերի բախման և հակակոռուպցիոն կառուցակարգերը	**Կատարող մարմին՝** Ֆինանսների նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Արդարադատության նախարարություն Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Կատարողականի թիրախներ **2025**	Ֆինանսների նախարարության պետական գնումների էլեկտրոնային գրանցամատյանը (ARMEPS) փոխկապակցվել է ԿԿՀ-ի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի հետ, որի միջոցով էլեկտրոնային գնումների տվյալները փոխանցվում են ԿԿՀ-ին՝ ներառյալ շահերի բախման առկայության կամ բացակայության մասին հայտարարությունները:
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
Ֆինանսների նախարարության կողմից մշակվել և շրջանառվել է «Գնումների մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի ընդունման արդյունքում կկատարելագործվեն հանրային գնումների ոլորտում շահերի բախման և հակակոռուպցիոն կառուցակարգերը: Համապատասխան ծրագրի գնման նպատակով կազմակերպվել է երկփուլ մրցույթ: Նախաորակավորվել են չորս կազմակերպություն՝ AWS, Oracle, Ebidtopay և European Dynamics, որոնց հետ ավարտվել են առաջին փուլի ամփոփիչ բանակցությունները և կազմակերպություններին է ներկայացվել վերջնական տեխնիկական առաջադրանքը: Նախաորակավորման մասնակիցներից միայն մեկի կողմից են ներկայացվել առաջարկություններ, որոնց ընդունելի համարված մասը ներառվել է տեխնիկական առաջադրանքում: Մրցույթի	Առկա չեն:

հանձնաժողովի 2025 թվականի մարտի 27-ի նիստում հաստատվել է մրցույթի 2-րդ փուլի հրավերը: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը է սահմանվել է 2025 թվականի հուլիսի 18-ը: Ընթացակարգի արդյունքների ամփոփումը և պայմանագրի կնքումը նախատեսվում է ավարտել 2025 թվականի օգոստոսի 30-ին:	
Լրացուցիչ նշումներ՝	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.11 **Կատարելագործել մրցակցության ոլորտի իրավախախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերը, մշակել այդ գործիքների կիրառման ուղեցույցներ**	**Կատարող մարմին՝** Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ) **Համակատարող մարմին՝** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Կատարողականի թիրախներ **2025**	1. Մշակվել են սքրինինգային ծրագրերի և իրավախախտումները վերհանող այլ գործիքների կիրառման մատչելի և համապարփակ ուղեցույցներ: 2. Շարունակաբար զարգացվել են ՄՊՀ-ի կարողությունները նշյալ գործիքների արդյունավետ կիրառման ուղղությամբ
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
• Կատարելագործվել է գների մոնիթորինգի գործիքակազմը, որի նպատակն է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից վերահսկել և կանխել գների չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման հնարավոր դեպքերը: • Մշակվել և ներդրվել է «Սպառողի Օգնականը» թվային գործիքը, որը հնարավորություն է տալիս սպառողին պարզեցված եղանակով ներկայացնել առցանց բողոքներ, այդ թվում՝ մրցակցային օրենսդրությամբ նախատեսված իրավախախտումների առնչությամբ, ինչպես նաև ստանալ ծանուցումներ բողոքի կարգավիճակի և ընթացքի մասին և ստանալ պատասխաններ էլեկտրոնային փոստի միջոցով: • Կատարվել է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի և պաշտոնական կայքի արդիականացման տեխնիկական առաջադրանքը: Տեխնիկական առաջադրանքի մշակման և կատարման շրջանակում հանդիպումներ և քննարկումներ են իրականացվել մի շարք մարմինների հետ,	Առկա չեն:

մասնավորապես՝ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի, ինչպես նաև Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության գործընկերների հետ:	
Լրացուցիչ նշումներ՝	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.12 **Արդիականացնել և կատարելագործել գնումների պլանավորման համակարգը**	**Կատարող մարմին՝** Ֆինանսների նախարարություն
Կատարողականի թիրախներ **2025**	Մշակվել և գործարկվել են պատվիրատուների կողմից ձեռք բերվող հիմնական ապրանքների համար միասնական բնութագրեր
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
Ֆինանսների նախարարությունը Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի հետ միասին նախաձեռնել է կաթնամթերք հանդիսացող գնման առարկաների նորմավորման գործընթաց: Գործընթացը ամփոփման փուլում է, որի արդյունքներով նախատեսվում է Կառավարության հաստատմանը ներկայացնել որոշման նախագիծ:	Առկա չեն:
Լրացուցիչ նշումներ՝	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.13 Շարունակաբար կատարելագործել հանրային գնումների գործընթացների թափանցիկության և հրապարակայնության համակարգերը	**Կատարող մարմին՝** ֆինանսների նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Արդարադատության նախարարություն Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Կատարողականի թիրախներ **2025**	Թարմացվել կամ ներդրվել են նոր հակակոռուպցիոն խելացի գործիքակազմեր:
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
2025 թվականի հուլիսի 2-ին ԱԺ կողմից ընդունվել է Ֆինանսների նախարարության մշակած «Գնումների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը: Առաջարկվել է լուծել հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գնումների կանոնների արդիականացման հետ կապված հարցերը: Մասնավորապես, այն դեպքերը, երբ այդ կազմակերպություններն իրենց վերահսկողության կամ ազդեցության տակ գտնվող ընկերություններից ձեռք են բերում ապրանքներ աշխատանքներ կամ ծառայություններ, որի պարագայում սահմանափակված է վերահսկողությունը և թափանցիկությունը: Այդ ընկերությունների դեպքում չի գործում նաև հանրային հսկողություն: Օրենքով սահմանվում է, որ եթե կատարվում են նման գնումներ, ապա հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունները պետք է	

հայտարարեն նման դեպքերի մասին, իսկ ազդեցության տակ գտնվող ընկերությունը, որը տվյալ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման համար կատարում է գնումներ, գործընթացները կազմակերպի գնումների օրենդսրությամբ կանոնակարգված մեխանիզմով՝ ապահովելով մրցակցություն, թափանցիկություն և հաշվետվողականություն: Մասնավորապես սահմանվել է, որ՝ - հանրային կազմակերպությունները գնումներ կարող են կատարել իրենց ազդեցության տակ գտնվող ընկերություններից՝ պայմանով, որ այդ պարագայում վերջիններս իրենց կարիքների համար կատարվող գնումները ևս պետք է կատարեն «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով. - մինչև իրենց ազդեցության տակ գտնվող ընկերություններից գնումներ կատարելը, հանրային կազմակերպությունը պետք է այդ մասին տեղեկացնի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (ՀԾԿՀ), որը կվարի նման ընկերությունների ցուցակը. - ընկերությունները կունենան իրենց գնումների կատարման կարգերը, որոնք չպետք է հակասեն նշված օրենքով սահմանված նպատակներին և սկզբունքներին: Ընդ որում ՀԾԿՀ-ն կհաստատի ընկերությունների գնումների կատարման կարգերին ներկայացվող հիմնական պայմանները՝ դրանք նախապես համաձայնեցնելով ՖՆ-ի հետ և կիրականացնի մոնիտորինգ այդ պայմանների կատարման նկատմամբ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով պետական կառավարման կամ ինքնավար պետական մարմինների հետ. - ընկերությունների կողմից կազմակերպվող գնման գործընթացների հետ կապված բողոքները կքննվեն մյուս պատվիրատուի համար սահմանված ռեժիմներին համապատասխան. - ընկերությունները պարտադիր պետք է հետևեն Ֆինանսների նախարարության կողմից վարվող մասնակիցների «սև ցուցակի» պահանջներին. - հանրային կազմակերպությունների և վերջիններիս ազդեցության տակ	

գտնվող ընկերությունների կողմից կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կողմից կիրականացվի հանրային հսկողություն՝ այլ պավիրատուների համար սահմանված մեխանիզմներով: Միաժամանակ, Ֆինանսների նախարարության կողմից մշակվել և շրջանառել է «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծ, որով առաջարկվում է ներդնել շահերի բախման մեխանիզմ՝ գնումների գործընթացներին պետական բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների, վերջիններիս հետ փոխկապակցված անձանց ուղղակի և անուղղակի մասնակցությունը բացառող համակարգ: Նշված նախագծի վերաբերյալ ստացվել է նաև պետական-իրավական փորձաքննության եզրակացությունը: Վերոնշյալ նախագծով ՀՀ կառավարությանը վերապահվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողի և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պատվիրատուների պաշտոնատար անձանց ազդեցության մակարդակի բարձրացման դեպքերը սահմանելու իրավասություն: Ընդ որում նախատեսվում է ունենալ թվով 5 մակարդակ. - 1-ին մակարդակում ներառվող պաշտոնատար անձանց հետ շահերի բախում ունեցող կազմակերպությունները չեն կարող մասնակցել գնման գործընթացներին: «Գնումների մասին» օրենքով նախատեսված լիազորված մարմնի գործառույթները համակարգող նախարարի տեղակալը ներառվում է 1-ին մակարդակում. - 2-րդ մակարդակում ներառվող պաշտոնատար անձանց հետ շահերի բախում ունեցող կազմակերպությունները չեն կարող մասնակցել տվյալ պատվիրատուի և վերջինիս կառավարմանը հանձնված առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կազմակերպվող գնման գործընթացներին: Այս մակարդակում ներառվում են քաղաքական պաշտոն զբաղեցնող անձիք:	

- 3-րդ մակարդակում ներառվող պաշտոնատար անձանց հետ շահերի բախում ունեցող կազմակերպությունները չեն կարող մասնակցել տվյալ պատվիրատուի կողմից կազմակերպվող գնման գործընթացներին: Այս մակարդակում ներառվում են մարմինների ղեկավարները, բացառությամբ երկրորդ մակարդակում ներառված անձանց, գլխավոր քարտուղարներն ու աշխատակազմի ղեկավարները, գործադիր մարմնի ղեկավարը և տեղակալը, կառավարիչը և նրա տեղակալը, խորհրդի, գործադիր և կառավարման մարմնի անդամները, պետական կամ համայնքային հիմնարկների ղեկավարները և տեղակալները: - 4-րդ մակարդակում ներառվող պաշտոնատար անձանց հետ շահերի բախում ունեոցող կազմակերպությունները չեն կարող մասնակցել տվյալ պաշտոնատար անձի համակարգման կամ կազմակերպման ներքո գտնվող միավորի կարիքների բավարարման համար կազմակերպվող գնման գործընթացներին: Այս մակարդակում ներառվում են կառուցվածքային միավորների ղեկավարները: - 5-րդ մակարդակում ներառված պաշտոնատար անձանց դեպքում գործում են «Գնումների մասին» օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված կարգավորումները, համաձայն որոնց եթե պաշտոնյան գնահատող հանձնաժողովի անդամ է, ապա վերջինս չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե հանձնաժողովի գործունեության ընթացքում պարզվում է, որ վերջիններիս հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) կամ այդ անձի հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը անհապաղ ինքնաբացարկ է հայտնում: Հանձնաժողովի	

անդամները ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը պայմանագիր կնքելու մասին որոշման հետ հրապարակվում է տեղեկագրում: Ընդ որում, երբ ազդեցության մակարդակի պատկանելիություն սահմանված չէ, պաշտոնատար անձը համարվում է հինգերորդ մակարդակում ներառված. - սահմանափակել նշված անձանց (բացառությամբ 5-րդ մակարդակի) հետ փոխկապակցված ընկերությունների՝ գնման գործընթացներին մասնակցելու հնարավորությունը. - սահմանել, որ բոլոր այն դեպքերում, երբ պայմանագիրը կնքելուց հետո բացահայտվում է, որ մինչև պայմանագրի կնքումը, առկա է եղել շահերի բախման իրավիճակ, ապա գործարքը համարվում է առոչինչ և պայմանագրի կողմ հանդիսացող՝ ընտրված մասնակիցը պատվիրատուին վերադարձնում է գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ պատվիրատուն պայմանագրի կողմ հանդիսացող՝ ընտրված մասնակցին ոչինչ չի վերադարձնում, ներառյալ իրական վնասը կամ բաց թողնված օգուտը: Նշված հանգամանքը հանդիսանում է մասնակցին «սև ցուցակում» ներառելու հիմք: Նախագծով սահմանվում է նաև «շահերի բախում» և «փոխկապակցված անձ» հասկացությունները: 3.ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, որով հստակեցվում են գործող օրենքի որոշ դրույթներ՝ բացառելով իրավակիրառ պրակտիկայում հաճախակի հանդիպող տարաբնույթ մեկնաբանությունները: Նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 20.06.25թ. թիվ 791-Ա որոշմամբ և ներկայացվել ԱԺ քննարկմանը: Մասնավորապես՝ - հստակեցվում է, որ պատվիրատուն չի կարող փոխել կնքված պայմանագրով նախատեսված գնման առարկան, իսկ բնութագրերին (տեխնիկական բնութագիր, մատակարարմն և վճարման պայմաններ)	

ներկայացվող պահանջների փոփոխման դեպքերը և կարգը կսահմանի Կառավարությունը. - հստակեցվում է, որ հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ պայմանավորված մեկ անձից գնումների կատարման պայմանների կիրարկման կարգը կսահմանի Կառավարությունը. - նախատեսվում է, որ այն դեպքերում, երբ մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցը պայմանագրի և որակավորման ապահովումները պետք է ներկայացնի բանկային երաշխիքի ձևով, ապա դրանց ներկայացման համար նախատեսվող ժամկետը պատվիրատուն ի սկզբանե նախատեսում է հրավերով, որը չի կարող պակաս լինել 10 օրից: Գործող կարգավորմամբ ժամկետը սահմանված է 10 օր. - նախատեսվում է, որ գնման առարկայի բնութագրերը՝ - պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և բխեն կարիքից, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը. - ներառում են ոչ գնային պայմանների ամբողջական նկարագրությունը: Գործող օրենքով սահմանված է, որ բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն կարիքին և ներառեն ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը: Ֆինանսների նախարարության կողմից առաջարկվել է հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների մեջ իրականացնել փոփոխություններ, որոնք թույլ կտան լավարկել գործող կարգավարումները: Առաջարկները հաստատվել են ՀԾԿՀ-ի կողմից: Մասնավորապես, նախատեսել՝ - գնման գործընթացներում թափանցիկություն և հրապարակայնություն ապահովելու նպատակով գնումների պլանում ներառվում է նաև գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների համար պլանավորված գինը. - գնահատող հանձնաժողովների կողմից հնարավոր հայեցողական որոշումներ կայացնելու հնարավորությունները բացառելու, ինչպես նաև ընթացակարգի մասնակիցների համար որոշակիություն ապահովելու	

նպատակով ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը, - շահերի բախմանը վերաբերող պայմանների սահմանում և դրանց գնահատման համար հետագծելիության հնարավորության ապահովում. - փակ շրջանակային համաձայնագրերով իրականացվող ընթացակարգերում ֆունկցիոնալ փոփոխությունների կատարում՝ անցում կատարելով բաց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգերի կազմակերպմանը. - գնման ընթացակարգերի մասնակիցների կողմից հայտերով իրական շահառուների բացահայտման մեխանիզմների սահմանում և հրապարակում. - գնման գործընթացների կազմակերպման ընթացքում իրականացվող գործողությունների և կայացվող որոշումների թափանցիկության և հրապարակայնության աստիճանի մեծացում: Հարկ է նշել, որ Ֆինանսների նախարարության և «Էկենգ» ՓԲԸ-ի համատեղ աշխատանքի արդյունքում սկսվել է www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակ» բաժնում հրապարակել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված անձանց փոխկապակցված կազմակերպությունների (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների) վերաբերյալ տեղեկատվությունը:	
Լրացուցիչ նշումներ՝	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.14 **Կատարելագործել և բարելավել հանրային գնումների ոլորտում հաշվետվողականության կառուցակարգերը՝ հանրության և մասնավոր ոլորտի շրջանում գնումների գործընթացի վերաբերյալ վստահության բարձրացման և ամրապնդման ուղղությամբ**	**Կատարող մարմին՝** Ֆինանսների նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
Կատարողականի թիրախներ **2025**	Կազմակերպվել և իրականացվել են առնվազն 6 իրազեկման արշավներ՝ այդ թվում նաև ՀԼՄ-ների և սոցիալական հարթակների միջոցով:
Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
Հանրության և մասնավոր ոլորտի շրջանում գնումների գործընթացի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև վստահության բարձրացման և ամրապնդման նպատակով՝ Ֆինանսների նախարարությունը ՀԼՄ-ների և սոցիալական հարթակների միջոցով ձեռնամուխ է եղել մի շարք միջոցառումների իրականացմանը: Մասնավորապես՝ - Ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ Սերգեյ Շահնազարյանը «Լուրեր»-ի հետ զրույցի շրջանակներում խոսել է մեկ անձից իրականացվող գնումների նվազման և պետական գնումների համակարգում ընթացակարգերի դյուրինացման մասին (https://www.facebook.com/share/v/1BswNoFM73/) - 2025 թվականի ապրիլի 23-ին «Իրազեկ քաղաքացիների միավորումը» ՀԿ կազմակերպել է հանրային քննարկում «Պետական գնումների խնդիրները. վերահսկողություն և թափանցիկություն»	

խորագրով: Միջոցառման բանախոսներից է եղել նաև Ֆինանսների փոխնախարար Ավագ Ավանեսյանը: - 2025 թվականի հունիսի 21-ից 22-ը Ծաղկաձորում կայացել է պետական գնումների համակարգի վերաբերյալ սեմինար-քննարկում «Պետական գնումների օրենսդրության զարգացումը և վերահսկողության մեթոդները» խորագրի ներքո: Լրատվամիջոցների և քաղհասարակության կազմակերպությունների համար անցկացվող միջոցառումը կազմակերպվել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ կողմից՝ Ֆինանսների նախարարության հետ համագործակցությամբ: Սեմինարի ընթացքում Ֆինանսների նախարարությունը ներկայացրել է պետական գնումների համակարգը, դրա վերահսկման ձևերն ու մեթոդները:	
Լրացուցիչ նշումներ՝	

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.15
Կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման արդյունավետության բարձրացման նպատակով շարունակաբար զարգացնել և կատարելագործել ինստիտուցիոնալ կառուցակարգերը և մեխանիզմները</td><td>Կատարող մարմին՝
Արդարադատության ակադեմիա

Համակատարող մարմիններ՝
Պետական վերահսկողության ծառայություն (համաձայնությամբ)
Հաշվեքննիչ պալատ (համաձայնությամբ)
Քննչական կոմիտե (համաձայնությամբ)
Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)
Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախներ</td><td rowspan="2">Հզորացվել են Գլխավոր դատախազության, Հակակոռուպցիոն կոմիտեի, Քննչական կոմիտեի, Հաշվեքննիչ պալատի, Պետական վերահսկողության ծառայության, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պաշտոնատար անձանց կարողությունները կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման ուղղությամբ: Կազմակերպվել և անցկացվել են առնվազն 6 վերապատրաստման դասընթացներ:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>2025 թվականի հունվարի 21-ից 24-ն ընկած ժամանակահատվածում ԵԱՀԿ ֆինանսավորմամբ Երևանի «Ռեդիսոն բլու» հյուրանոցում կազմակերպվել է «Վիրտուալ ակտիվների վերաբերյալ քննություն, բլոքչեյն» թեմայով վերապատրաստում, որին մասնակցել է Հակակոռուպցիոն կոմիտեի 2 ծառայող:
2025 թվականի հունվարի 23-ից 24-ն ընկած</td><td>2025 թվականի 2-րդ կիսամյակում նախատեսվում են կրկնակի քանակով վերապատրաստումներ:</td></tr>
</table>

	ժամանակահատվածում ԱՄՆ Պետքարտուղարության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի (INL) ֆինանսավորմամբ «East-West Management» կազմակերպությունը «Ծաղկաձոր Մարիոթ» հյուրանոցում կազմակերպել է «Ապօրինի հարստացում» թեմայով վերապատրաստում, որին մասնակցել է Հակակոռուպցիոն կոմիտեի 3 ծառայող: 2025 թվականի հունիսի 13-ից 15-ն ընկած ժամանակահատվածում ԵՄ ֆինանսավորմամբ «Էքորիս» կազմակերպությունը Աղվերանի «Արարատ» ռեզորտում կազմակերպել է «Փողերի լվացման հատկանիշներով հարուցված քրեական գործերի քննության առանձնահատկությունները» թեմայով վերապատրաստում, որին մասնակցել է Հակակոռուպցիոն կոմիտեի 9 ծառայող: Միաժամանակ, 2025 թվականի մայիսի 29-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է ««Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների փաթեթը, որն ուժի մեջ է մտել 2025 թվականի հունիսի 28-ին (առանձին դրույթների համար սահմանված է ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ): Այս պահին ՊՎԾ-ում իրականացվում է օրենսդրական փոփոխություններից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակման և շրջանառման գործընթացը: Այնուհետև կմեկնարկեն պաշտոնատար անձանց կարողությունների շարունակական կատարելագործմանն ուղղված միջոցառումները: Գործընթացի հապաղումը պայմանավորված է նոր օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակման և ընդունման գործընթացով: Զուգահեռ հզորացվել են Գլխավոր դատախազության, Հակակոռուպցիոն կոմիտեի, Քննչական կոմիտեի,	

	Հաշվեքննիչ պալատի, Պետական վերահսկողության ծառայության, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պաշտոնատար անձանց կարողությունները կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման ուղղությամբ: Կազմակերպվել և անցկացվել են առնվազն 6 վերապատրաստման դասընթացներ: Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող 94 անձ 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մասնակցել են կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների վերաբերյալ հետևյալ թեմաներով 8 վերապատրաստման դասընթացների. 1) «Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան» թեմայով՝ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստումների շրջանակներում՝ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող 83 անձ (4 դասընթաց). 2) 2025թ. հունվարի 23-ից 24-ը ՄԱԿ-ի միջտարածաշրջանային հանցավորության և Արդարադատության հետազոտական ինստիտուտի ու ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից համատեղ կազմակերպված «CBRN Counter-proliferation Finance and Sanctions» խորագրով աշխատաժողովին՝ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող 2 անձ. 3) 2025թ.-ի հունվարի 21-ից 24-ը ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակի և ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից կազմակերպված «Basic Training on Investigating the Criminal Use of Virtual Assets and Blockchain-Based Finance» (Վիրտուալ ակտիվների հանցավոր օգտագործման և բլոկչեյնի վրա հիմնված ֆինանսական քննության	

	վերաբերյալ) խորագրով դասընթացին՝ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող 8 անձ. 4) Ինտերպոլի Համաշխարհային ակադեմիայի կողմից ստացված՝ Լոնդոնի ոստիկանության տնտեսական և կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ակադեմիայի կողմից կազմակերպված «Demystifying Cyber Crime» և «Demystifying Blockchain and criptocurrencies» թեմաներով 2 առցանց դասընթացներին՝ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող 1 անձ: Դատախազների, Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, Քննչական կոմիտեի քննիչների տարեկան վերապատրաստման 2025 թվականի ուսուցման ծրագրերում ներառվել են կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման և քննության առնչությամբ թեմաներ ու մոդուլներ: Մասնավորապես, նախատեսվել են «Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները», «Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցեր», «Տնտեսական հանցագործությունների որակման հիմնահարցեր» վերտառությամբ դասընթացներ բոլոր դատախազների համար, Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների տարեկան վերապատրաստման ծրագրում «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի շրջանակում մոդուլներ են նախատեսվել կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման և քննության վերաբերյալ, Քննչական կոմիտեի քննիչների տարեկան վերապատրաստման ծրագրում նախատեսվել է «Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան» վերտառությամբ դասընթացը: «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր»	

	վերտառությամբ դասընթացի շրջանակում վերապատրաստվել են Հակակոռուպցիոն կոմիտեի 23 քննիչ, «Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան» վերտառությամբ դասընթացի շրջանակում վերապատրաստվել են Քննչական կոմիտեի 83 քննիչ (դատախազների մասով դասընթացներն ընդգրկված են հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում, որոնցով վերապատրաստումները նախատեսված են 2025 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին):	
Լրացուցիչ նշումներ՝		

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

<table>
<tr><td colspan="2">ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.1
Գործարկել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակ</td><td>Կատարող մարմին՝
Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին՝
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն (համակատարող)</td></tr>
<tr><td></td><td>Կատարողականի թիրախ</td><td rowspan="2">Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակը գործարկվել է:</td></tr>
<tr><td>Տարի</td><td>2025</td></tr>
<tr><td></td><td>Կատարված աշխատանքների նկարագրություն</td><td>Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ</td></tr>
<tr><td></td><td>Դոնոր կազմակերպության կողմից տեխնիկական աջակցության կասեցման արդյունքում՝ 2024 թվականի ավարտին կանգ են առել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակման ուղղությամբ տարվող աշխատանքները: Ներկայում հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման հարթակի գործարկումը հնարավորին սեղմ ժամկետում ապահովելու նպատակով տարվում են համապատասխան աշխատանքներ:</td><td>Դոնոր կազմակերպության գործունեության դադարեցում:</td></tr>
<tr><td colspan="3">Լրացուցիչ նշումներ՝</td></tr>
</table>

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.3 Վերանայել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությանն առնչվող կարգավորումները և ներառականության շրջանակը		**Կատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն **Համակատարող մարմիններ՝** Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամներ (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունը կարգավորող իրավական ակտերում փոփոխություններն ընդունվել են: Առավել լայն ներառականության ապահովման նպատակով անցկացվել է մրցույթ՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի մասնակից ՔԿՀ-ների կազմի ամբողջական համալրման նպատակով:
Տարի	2025	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը: Նախագծով առաջարկվում է բարելավել հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունը, սահմանել խորհրդի գործունեությանը հասարակական կազմակերպությունների ներգրավման բարելավված կառուցակարգեր: Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունը կարգավորող իրավական ակտերում	Առկա չեն:

	փոփոխությունները ներկայում քննարկման փուլում են:	
Լրացուցիչ նշումներ՝		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.4 Սահմանել կոռուպցիայի դեմ պայքարի, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման կառուցակարգերը և ապահովել դրանց իրագործումը		**Կատարող մարմին՝** Արդարադատության նախարարություն **Համակատարող մարմին** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
	Կատարողականի թիրախներ	Կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ մեթոդաբանությունը հաստատվել է, պարբերական հարցումներ իրականացնելու իրավական կարգավորումները և լիազոր մարմինը սահմանվել են:
Տարի	2025	
	Կատարված աշխատանքների նկարագրություն	**Գործողության իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ**
	Դեռևս 2024 թվականին ԵՄ հետ համագործակցությամբ մեկնարկել են կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման վերաբերյալ մեթոդաբանության մշակման աշխատանքները:	Առկա չեն:

	Նշյալի շրջանակներում ԵՄ փորձագետի կողմից Արդարադատության նախարարություն է ներկայացվել հանրության վրա կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության և հանրային ընկալումների բացահայտման նպատակով հարցումներ իրականացնելու ձևաչափ և տեղեկատվական թերթիկ: Պարբերական հարցումներ իրականացնելու համար լիազոր մարմին սահմանելու նպատակով Արդարադատության նախարարությունը մշակել և շահագրգիռ մարմիններին կարծիքի է ներկայացրել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում» լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նախագծով սահմանվել է, որ կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների իրականացման ազդեցության և հասարակական ընկալումների պարզման նպատակով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնում է հարցումներ: Նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ և ներկայում գտնվում է լրամշակման փուլում:	
Լրացուցիչ նշումներ՝		